

V.

ՅԱԿՈԲ ԳՈՒՄԱ,

ՆՐԱ ԴՊՐՈՑԸ ԵՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Ա. Պ Լ Ի Պ Ի Ն Ա.

Աղ Գային ուսումնասիրութիւնները՝ լատկապէս աղդի և աղ-
դայնութեան վերաբերեալ ուսուածքները, գիտական նպատակով
ըմբռնելու համար մի ազգի բնաւորութիւնը ու կեանքը՝ իրբե
ազգայնութեան և պետութեան հիմք, և ցոյց տալու դրանցից
առաջացող սկզբունքները, հասարակական զարգացման առանձ-
նայատկութիւնները և ժամանակակից պահանջները—գիտնական-
ների և քաղաքագէտների ուշադրութեան առարկա դարձան
եւրոպական քաղաքակրթութեան միայն նորագոյն ժամանակնե-
րը. ազգային-քաղաքական շարժումները՝ XVIII դարի վերչից
սկսած դարձրին այժմ այդ ուսումնասիրութիւնները թէ հան-
րային շահի առարկալ, թէ գիտութեան խնդիր:

Նորագոյն դարերի պատմութիւնը սկսեց աւելի սերտ և
լաճախ հանդիպեցնել ազգերը բարեկամական և թշնամական պա-
տահումներում: Պետութեան գործնական և տեսական մարդ-
կանց քաղաքական միաբը դուրս էր գալիս իր ազգի սահմաննե-
րից, որոնում էր լնդհանուր սկզբունքներ և նկատում ցեղա-
յին առանձնայատկութիւններ: Պատմական գիտութեան մէջ սա-
կաւառսակաւ պահանջ էր անում պատմութեան ցիրուցան ի-
րողութիւններին բանական բացատրութիւն տալու: XVII դա-
րում արդէն հարց է դրում պատմութեան փիլիսոփալութեան

մասին։ Տասնեւութերորդ դարը՝ չը նայած իր հասարակական տեսութիւնների վերացական և աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտ) եղանակին՝ պատճութեան մէջ համշխափեց «բարքերի» հարցին, ալսինքն՝ ուրիշ խօսքերով, ցեղական տարբեշութիւնների և ազգայնութեան հարցին։ Բաղմավէպները, որ այնքան շատ էին թւով ԽVIII դարում, սկսեցին ուշադրութիւն դարձնել կենցաղաքարութեան գծերի, ժողովրդական հնութեան վրա և սկիզբ դրին այն հնախօսական և ազգադրական հաւաքումին, որ մեր դարում կանոնաւոր դիտութիւն է դառնում։ Ուշադրութիւնը դէպի ժողովրդի հոծ բաղմութիւնները առաջանում էր թէ դիտական շահից, թէ դարուս ազատամիտ-մարդասիրական տեսութիւններից ու ումանտիսմին առաջնժայ նշաններից որպէս և արևմտեան Եւրոպայի ներքին քաղաքական լուգումից։ Հին աւատականութեան դէմ ծագած հետզհետէ սաստկացող բողոքները, ամրացնելով «երրորդ» դասակարգի քաղաքական դիտակցութիւնը, ճանապարհ հարթեցին «չորրորդի» համար էլ, ամբողջ ժողովրդի գաղափարի համար—ազատ և հաւասար իրաւունք ունեցող ժողովրդի։ Մեր դարի Եւրոպական անցքերը աւելի հաստատուն հմտք ընծալեցին այս շարժումին և ընդլայնեցին նրա գաղափարը՝ դարձնելով նրան տիրապետող սկրզբունք, որը մի կողմից ազգային-քաղաքական է և միւսից՝ ժողովրդական։ Կոլլուուրի և տնտեսական գործունէութեան արագ զարգացումը, քաղաքական զօրեղ ընդհարումները պահանջում էին ամեն տեղ ազգային ոյժերի լարումը, որ աւելի արագացնում էր հասարակական կարծիքի և դրա հետ միասին ժողովրդապետական (գենօկրատիկ) ծգուումների անումը. պահանջ էր ծագում բարձրացնելու ժողովրդական ոյժերի արտադրութիւնը և անհրաժեշտորէն լայնացնելու ժողովրդի ազատութիւնները և լուսաւորութիւնը։ Այս պոօցեսի կողմնակի՝ բայց անկասկածելի ազգեցութիւնը երևեց և Ռուսաստանում՝ նորտերի ազատութեան մէջ։ Ժողովրդական շարժումին զուգահետ ընթանում էր ազգութիւնների շարժումը, որ հանդէս եկաւ այնպիսի ցեղերի ազգայնական ծգուումների արձարծումով (ինչպէս շատերինը պատօնականներից), որոնք անհետացած էին համարում արդէն։

Այս դիմումը դէպի ժողովրդի գաղափարը քաղաքական և հասարակական շրջանում՝ առաջ բերեց զրականութեան մէջ անսովոր կենդանութիւն՝ մի ամբողջ լեղափոխութիւն, որ ստեղծեց նոր ուղղութիւններ բանաստեղծութեան մէջ և մի շարք նորանոր մասնադիտական ճիւղեր գիտութեան մէջ։ Այսպէս կոչւած ոսմանտիսմը՝ որոշ իմաստով՝ ժողովրդական լետաշրջում կամ հակաշարժում էր ազնւապետական կեղծ-կլասիքականութեան դէմ և նպաստում էր այն մտքով, որ տեղ տրւի գրականութեան մէջ մինչև այն ժամանակ արհամարհւած ժողովրդական կեանքին և ժողովրդական ստեղծագործութեան։ Ռօմանտիկ շարժումը աւելի կամ պակաս ժաւալով ընդգրկեց համայն Եւրոպան։ Գրականութիւնը փոխւեց իր բովանդակութիւնով և ծեռվ. բուն լեզուն էլ կերպարանափոխ եղաւ. նոյն մշակւած գրականութիւնների զրբի մէջ մտան ոչ միայն ժողովրդական լեզուն, այլ մինչև անդամ գաւառական բարբառները։ Հասարակութեան գիտակցութեան մէջ այս ճանապարհով մտնում էին գաղափարներ՝ գրականութեանը առաջ անձանօթ տարրեր, որոնք ոչ այնքան հեռու անցեալում ատելի էին. հասարակութիւնը ժանօթանում էր ժողովրդի կեանքին երեսառերես՝ նրա ամենածածուկ խաւերում և լետ ընկած անկիւններում. բանաստեղծութիւնը այստեղ գտնում էր հարուստ նիւթեր փափուկ, գրաւիչ հովւերգութեան և ցնցող դրամալի և վէպի համար, և տածում էր հասարակական զգացմունքը սիրոյ ազնւագոյն ներշնչումներով առ ժողովուրդը։ Հետաքրքրութիւնը դէպի ժողովուրդը արտադրեց գիտութեան մէջ բազմաթիւ վերին աստիճանի շահագրդիո ու խրատական հետազօտութիւններ, որոնք նոր կերպարանք էին տալիս պատմութեան, և հասարակական գիտակցութեան մէջ մըտցնում էին ժողովրդական կեանքի նոր ըմբռնում։ Այսպիսի էին ուսումնափութիւնները պատմութեան, բանասիրութեան, ազգագրութեան, մարդաբանութեան, դիւցաբանութեան, լեզուի շրջանում՝ թէ առանձին ազգութիւնների մէջ և թէ համեմատաբար...*)։

Այսպէս ուրեմն՝ գիտական շրջանի ընդլայնումը աւելի ևս

*) История русской этнографии, А. Пыпина, 6. I, էջ 3—5:

ընդարձակում էր հասարակական գիտակցութեան մէջ ազգայ-նութեան շահագրգռութիւնը. ևս առաւել տարածում էր գիտողութիւնների հորիզոնը, բազմանում էր իրողութիւնների նիւթը, շատանում էր հայեցակէտների պէսպիտութիւնը, որոնցից պէտք էր ուսումնասիրել այնպիսի մեծ և բարդ երևոյթը, ինչպէս է ժողովրդական կեանքը և ժողովրդի էութիւնը: Տասնեւիններորդ դարու երեսնական թւականներից, երր այնքան անեց ու բազմացաւ պատմական նիւթերի քանակութիւնը, առաջ են գալիս գիտական շարժման առաջին նշանները՝ շարժման, որ լեռոյ զարդացաւ, 40-ական թւականներում, և մացրեց պատմական հետազօտութեան նոր եղանակներ: Առաջառոր շրջաններում Շելլինդի փիլիսոփայութեան կարճատև ազգեցութիւնը փոխարինում է հեգելականութեան տիրապետութիւնով. այս փիլիսոփայական ուղղութիւնը՝ իր բոլոր միակողմանիութիւնով, որ նրշմարտում էր թէ Ռուսաստանում և թէ Գերմանիայում, այն բարերար ազգեցութիւնը ունէր, որ հարկադրում էր որոնել ժովրդի պատմութեան մէջ ընդհանուր հիմունքներ կամ որևէ առաջնորդող գաղափար, բացատրել ժողովրդական կեանքի անցքերը ոչ միմիայն նեղ իրազիտական (պուազմատիք) մեկնութիւններով, այլ հիմնական ժողովրդական էութեան ամբողջ կազմով: Պատմութիւնը դարձարեց պատահական անձինքների և անցքերի համագումար լինելուց, որոնք մերձագոյն նպատակների են ծառալում, այլ դարձաւ ազգային գաղափարների յաջորդական զարդացում... Յատկապէս Գերմանիայում արդ մի ժամանակամիջոց էր, երբ ճոխապէս զարդանում էին պատմական հետազօտութիւնները... Սավինյի՝ իրաւունքի պատմութեան, Ռիտսեր՝ աշխարհագրութեան, Ռատումեր, Գերվինուս, Ռանկէ, Լէօ և ուրիշներ՝ քաղաքական պատմութեան, Գոխմմ լեզւի, ժողովրդական դիւցաբանութեան և բանաստեղծութեան պատմութեան, հնախօսութեան իրաւունքի, Բօպպ՝ համեմատական լեզւագիտութեան մէջ սրանք ունէին Ռուսաստանում իրանց երթեմն անմիշական աշակերտները և հետևողները: Իր նշանաւոր ազգեցութիւնը ունէր և Փրանսական և անգլիական գիտական դրականութիւնը... Պատմական ըմբռնումը աւելի բազմակողմանի դարձաւ՝ քան առաջ, աղբիւների քննադատութիւնը հա-

սաւ մի զարմանալի նրբութեան, հետազօտութեան մեթօդը ստացաւ տրամադրանական մակացովթեան (Փոռմուլա) ճշգրտութիւն. հնութեան և ազգայնութեան ուսումնասիրութեան համար դործաղրեցին այն ժամանակ նոր միայն հաստատապէս սահմանւած զիտութիւններ—համեմատական լեզւադիտութիւնը և համեմատական ազգագրութիւնը...*)

Խոկապէս լեզւագիտութեան մէջ XIX դարի սկզբից կատարւեց՝ մանաւասնդ Գերմանիալում, նոյնպիսի յանկարծակի փոփոխութիւն, ինչպիսին պատահեց պատմազրութեան մէջ պատմական դպրոցին: Գիտութեան երկու ճիւղերի շարժումն էլ շատ դէպքերում զուգաշակիղ էր ընթանում. ուսական հիմքի մէջ տիրապետում էր նոյն միտքը դործարանական (օոդանիքական) զարգացման մասին. բարոյական - հասարակականութիւն՝ նոյն հակաշարժումը XVIII դարի վերացական բանական փիլիսոփայութեան (ուսցիօնալիսմ) դէմ և ծգտում՝ գտնելու ազգայնական առանձնայասակութիւններ, հակում դէպի ժողովրդական վաղընշարանութիւնը (արխակամ): Վերջապէս, ինչպէս որ պատմական դպրոցի զարգացմանը ուղեկցում էին «բազմահատոր լիշտակարաններ», պատմական աղբիւրների հաւաքածուներ, այնպէս և բանասիրական ուսումնասիրութիւնը առիթ տեց ժողովրդական լեզւի և հին գրականութեան լիշտակարանների բազմաթիւ հրատարակութիւններին և նրանց ընդարձակ և մանրամասն մշակութեանը:

Գերմանական լեզւագիտութիւնը այն ժամանակ զարգանում էր երեք դիխաւոր ուղղութիւնով—համեմատական, որի հիմնադիրն էր Բօպպ, պատմական, որի պարագուլիսն էր Յակոբ Գոկմմ, և ընդհանուր փիլիսոփայական, որի նախածեռնողն էր Վիհելմ Հումբոլդտ: Համեմատական լեզւագիտութիւնը՝ լեզուների մի ամբողջ դասակարգ ուսումնասիրելուց լետոյ՝ առաջին անգամ հաստատեց միւնոյն աղբիւրից նրանց ժապած լինելը և ուրեմն, արսպէս ասած՝ հնդիկ-եւրոպական լեզուների սերտ աղդակցութիւնը, գտնելով նրանց աստիճանաւոր զարգացման հեռապատկերը, որ լետոյ եռանդուն հետազօտութիւնների առար-

*) История русской этнографии, т. 32—33.

կայ դարձաւ ուսումնականների յետագալ սերնդի համար: Բօպ-
պի աշխատութիւնը (բազմահատոր «Համեմատական քերակա-
նութիւն») զիսաւորագոյն հնդիկ-եւրոպական լեզուների, նոյն
թւում և հին-սլավոնականի) յաղթանակ էր գերմանական դի-
տութեան՝ մի կատարեալ դիւտ: Սոյն մաքով՝ Գոփմծ ձեռնար-
կեց իր պատմական հետազօտութիւնը (գերմանական) լեզւի օր-
դանական վոփիխութեան՝ նրա կեանքի զանազան ժամանակա-
միջոցներում. այստեղ առաջին անդամ վերականգնում էր լեզւի
զարգացման պատկերը այն հնագոյն ձևերից, որը կարողացաւ
նշմարել պատմութիւնը, մինչև նրա՝ լեզւի, նորագոյն կաղմու-
թիւնները: Վերջապէս, նա շօշափեց մարդկալին լեզւի, լեզու-
ների հիմնական (երեք) խմբերի բաժանման, լեզւի ներքին կաղ-
մակերպութեան և այլ ընդհանուր խնդիրներ: Այդ ուսումնա-
սիրութիւնների հաստատելուց՝ բայց յի նոր՝ անդամ յան-
կարծագիւտ ասպարէզ գիտական հետազօտութիւնների համար,
որոնք շուտով բոլորովին արդէն փոխեցին կամ նորից հիմնեցին
պատմական, դրականական և ազգագրական գիտութեան ամբողջ
ճիւղեր. գիւցաբանութիւնը, կոլլացուրի պատմութիւնը, իրա-
ւունքի հնութիւնները, ազգագրութիւնը յաճախակի դառնում
էին միան գործադրական լեզվագիտութիւն: Համեմատական լեզ-
ւագիտութիւնը՝ լեզւի պատմութեան հետ միացած, հնարաւո-
րութիւն էր ընծայում թափանցելու այն նախապատմական դա-
րաշրջանները, որոնք անհասանելի էին համարւում գիտութեան
համար և առաջացնում էին միան քմահաճ ենթադրութիւններ.
Նա հնարաւորութիւններ տւեց ժողովրդի հնագոյն դարաշրջա-
նում երևան հանելու հասկացողութիւնների և կացութեան վի-
ճակը, վերականգնելու նրա դիւցաբանութիւնը և հաստատու-
թիւնները, գտնելու ցեղերի կոլլացուրական կապերի հետքերը,
իրար վրա ունեցած փոխադրած ազգեցութիւնը և փոխառու-
թիւնները, և առաջին անդամ բացատրեց ժողովրդական բա-
նահիւսութեան եշդրիտ յատկութիւնը և արժէքը: Յակոր Գոփմ-
մի մեծահոչակ երկասիրութիւնները ցոյց էին տալիս նաև հե-
տազօտութեան հանապարհը և նրա ձեռք բերած վերին աստի-
ճանի հետաքրքրական հետևանքները: Ժողովրդական կացութիւ-
նը, հնութիւնը, բանաստեղծութիւնը և լեզուն մի չեղած ան-

խոնջ ուսումնասիրութեան առարկալ դարձան։ Վերջապէս, ժողովրդականը դարձաւ պատմական լեզւադիտութեան կենդրոն, նրա ներկայութիւնը՝ բանաստեղծական արժանաւորութեան չափ։ միշին դարերը, երբ ժողովրդական կացութեան մէջ անմիջապէս աւելի շատ էին պահպանւել հնութեան անարատ մնացորդներ, միրւած դարաշրջան դարձան... Ըստ էութեան՝ դա ուօմանտիսմ չէր. այդ ուսումնասիրութիւնների հիմնական եղանակը չէր և ասպետական և կաթոլիկական միստիքականութիւն, և դրանցից՝ իրեւ մերձաւոր եղրակացութիւն, չէր ծագում քաղաքական պահպանողականութիւն, ինչպէս այդ լինում էր զուտ ուօմանտիկների մօտ։ Այստեղ, ընդհակառակը, ամենից առաջ դորժում էին գիտական մօտիւները, որոնց դժւար թէ սաղէր մանր քաղաքական նպատակաւորութիւնը (տենդենցիող) կամ երեակայութեան կամալականութիւնը, և կասարելատիպէր (իդէալ) կաղմակերպում էին այլ տեսակ։ Գոկմմին գրաւում էր միշին դարերում ոչ թէ ասպետական և արեղալական միստիքականութիւնը, այլ ժողովուրդը և նրա պարզամիտ աշխարհայեցողութիւնը—այդ ոչինչ, որ դա մի փոքր հեթանոսական էր. դրա շնորհիւ՝ նա աւելի զեղուն էր բանաստեղծութիւնով և անմիշական բարոյական զգացմունքով։ Իր քաղաքական և կրօնական կարծիքներով Գոկմմը՝ չը նալամ իր բոլոր հնասիրական հակումին, մնաց ազատամիտ մարդ։ Անուամենալիւ, այս նոր գիտական դիմումը դէպի հնութիւնը ունէր շփման կէտեր ուօմանտիքականութեան հետ, և ինըն էլ առաջացնում էր նման երեւութներ, երբ գիտական-բանաստեղծական ժողովրդասիրութիւնը չափաղանց ծգտում էր դէպի հնութիւնը, տեսնելով նրա մէջ միայն նահապետական հովերգութիւն և մոռանալով նահապետական «ժամանակների խաւարը»,—որը շատ ծեռնտու էր խաւարամիտներին (օրսկուռանտ)...*)

Գոկմմի պիխաւոր աշխատութիւնները **) կատարւած էին շատ առաջ, քան դրանք կենդանացուցիչ ոյժ դարձան նրա հետեւողների համար։ Գոկմմի հայեացքները աղգութեան և հնու-

*) Ист. русск. этнография, т. II, ч. 37—38:

**) Տես Վերը, ч. 65:

թեան վրա ունէին իրանց արմատները գերմանական աղքալին շարժման մէջ՝ XIX դարու սկզբում, որ վաղուց էր պատրաստւած և այն ժամանակ առանձին կերպով լարւած էր Գերմանիայի աղէտներից նապօկէօնի պատերազմների միջոցին։ Դա՝ ուսմանտիսմի ժաղկած ժամանակն էր. բայց մինչդեռ գրականական ուսմանտիսմը՝ նետւելով միշին դարերը — «յետ դարձիր», «դէպի տուն» — մթին միստիքականութիւն կամ մինչև իսկ նեղ, չափազանց անհամակրելի լետադիմուկան տենդենց էր դառնում, Գոխմը հաւատարիմ մնաց աղդալին գաղափարի լաւագոյն ձրդտումներին։ Նրա հայեացը իսկապէս ուսմանտիկական էր, բայց շնորհիւ դիտութեան, անծնական բնաւորութեան և հանճարին դարդացաւ ու դարձաւ հնութեան վեհ բանաստեղծական վերաստեղծում, որը հանդիսանում էր նրան իրեւ աղքերի անսրատ մանկութեան և պատանեկութեան ժամանակ՝ լի բնութեան զդացմունքով, բարոյական մաքրութիւնով և անմիշականութիւնով։ հարուստ ստեղծագործական երևակայութիւնով, կենդանացած և արտայայտած ընդհանուր ժողովրդական բանաստեղծութիւնով։ Միշին դարերի գերմանական և բոլոր միւս եւրոպական աղքերի լիշտակարանների քաջ ժանօմթութիւնը, լեզուի պատմական և համեմատա-բանասիրական ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն տվին Գոխմին կաստելու միշնադարեան հրնութեան հոգակապ վերանորոգումը — լեզուի, իրաւաբանական կացութեան, կրօնի (դիշաբանութեան), բանաստեղծութեան մէջ։ Միշնադարեան աշխարհը նրա երկերի մէջ ներկայացաւ վառ բանաստեղծորէն-գունաւորւած պատկերով, ինքնատիպ և վեհապանձ, — և միշին դարերի արապիսի պատկերացումը և նրանց անդրադարձումը ժամանակակից ժողովրդի խնամքով պահպանւած աւանդութիւնների մէջ շատ զօրեղ տպաւորութիւն գործեց, որը արծագանք գտաւ նաև Ռուսաստանում։ Դեռ իր աշխատութիւնների սկզբում, երբ նոր էր ծեռնամուխ եղել ժողովրդական հնութեան և նրա մինչև այժմ պահպանւած մնացորդների ուսումնասիրութեան, Գոխմը շատ բարձր գաղափար ունէր ժողովրդական աւանդութեան արժեքի մասին։ Նա խորապէս համոզւեց ժողովրդի նախնական բանահիւսութեան անհամեմատ գերազանցութեան մասին՝ գերազանցութեան, որ

կարող էր միայն սահմանափակւել աւանդութեան կցկտուր լինելովք։ Արդէն այն ժամանակ նա պարզեց իրան ժողովրդական վիպասանութեան իմաստը, նշտիւ ցուց տւեց նրա էութիւնը և հաստատուն հիմք դրեց ասլաղաւ հետազօտութիւնների համար, որ յետոյ կատարեց նա ինքը և նրա դպրոցը։ Դռիմմը համոգւած էր, որ ժողովրդական զրոյցը միշտ նշգրիտ է, նրա հիմքը միշտ բանաստեղծական և բարոյական նշմարտութեան վրա է համոզում. վէպը ոչ զուտ առասպել է, ոչ զուտ պատմութիւն, նրա էութիւնը կապանում է նրանց փոխաղարձ թափանցման մէջ։ Վէպի ժագման համար անհրաժեշտ է մի պատմական իրողութիւն, որով ժողովուրդը այնպէս շերմ տոգորւած պիտի լինի, որ կարողանայ լարմարւել նրան առասպելը։ Այսպէս՝ վէպը կրում է իր մէջ սատւածային և մարդկային մասը. մէկը բարձրացնում է նրան պատմութիւնից վեր, միւսը կրկին մօտեցնում է նրան։ Աստւածները դառնում են մարդիկ, և զրոյցների այլասերումները քանի գնում աւելի մօտենում են մեզ։ Եթէ վէպի այս բաղադրեալ մասերը զատենք, նրանից կարելի է քաղել ոչ սակաւ փաստեր դիւցաբանութեան համար։

Դռիմմի մօտ մենք կը դտնենք արդէն լիտապէս զարգացած հին աշխարհակեցողութեան փառաբանութիւնը, երբ բոլոր կացութիւնը որոշում էր լիակատար ամբողջութիւնով և միութիւնով, երբ գոյութիւն ունէր մէկ՝ ընդհանուր ժողովրդական բանաստեղծութիւն, որ ծուլում էր ամենքի և ամեն մէկի մրտածմունքները և զգացմունքները, և երբ իրական և բարոյական կեանքի բոլոր արտապտութիւնները լրաւաբանւում էին վէպի վսեմ և բարոյապէս անարատ ստեղծումներով, որ զուգաւորում էր աստւածայինը և մարդկայինը, կրօնը և պատմութիւնը։ — Դռիմմի գործունէութեան միշակ մասը, ալինքն այն, որ փառաւորեց նրա անունը և գիտութեան մէջ ընդարձակ աղդեցութիւն գրաւեց նրա համար, — նէիրւած էր լեզւի հետազօտութեան, (որը՝ նրա կարծիքով, ինքն էլ ժողովրդի բանաստեղծական արարած էր,) և հին իրաւունքի և դիւցաբանութեան ուսումնասիրութեան։

«Հնութիւններ դերմանական իրաւունքի» և «Դիւցաբանութիւն» գրւածքներում հաւասար կերպով արտացոլում են

Գոխմնի թէօրիալի թէ բարձր արժանաւորութիւնները, որ մենք հանդիպում ենք նաև նրա հետևողների ուսումնասիրութիւնների մէջ, թէ թերութիւնները, որոնք նոյնակա ազգեցին սրանց վրա։ Մենք լիշեցինք վերը, որ Գոխմն՝ իր լարաբերութիւնով դէպի միշին դարերը, սերտ կապւած է դերմանական ուօմանտիկ դպրոցի հետ։ Միջնադարեան բանաստեղծութեան ուսումնասիրութեան մէջ նրա նախորդներն էին Շլէզել և Տիկ, մինչեւ անգամ Առնիմ և Նօվալիս. բայց նա զերծ մնաց այն լետադէմ հասարակա-քաղաքական եղրակացութիւններից, որ անում էին միջնադարեան հնութեան ուօմանտիկ կողմնակիցներից շատերը, և նրա գաղափարացումից իւրացրեց միան մարդասիրական (հումանիտար) և բանաստեղծական կողմերը։ Բայց դա այնուամենանիւ ուօմանտիկ գաղափարացում էր. գերմանական հնութիւնը և միշին դարերը նրան թւում էին համարեա պարզամիտ, բայց անմեղ և բանաստեղծական Արկադիա, որից լամենալնդէպը շատ բան կարող էին ուսանել լետին ժամանակները։ Նրա անձնական բնաւորութիւնը, գիտնականի յափշտակութիւնը և իդէալիստի կողմնապահութիւնը որոնում գտնում էին այդ աշխարհում բոլորը, ինչ որ բանաստեղծական էր, մարդկօրէն ճշշմարիտ ու արժանի և ժողովրդական սովորովթն ու աւանդութիւնը, ուր նա գտնում էր այդ, նրա աչքում ստանում էին բարձր արժանաւորութեան վեհութիւն։

«Հնութեան իրաւունքում» Գոխմն ունեցել է շատ նախորդներ, որոնք հաւաքել էին իրողութիւններ, լիշատակարաններ և իրաւաբանական մեկնութիւններ. բայց նրա աշխատութիւնը մի չեղած գործ էր։ Գոխմն թողեց պաշտօնական իրաւաբանական աղբիւների և հաստատութիւնների հետազոտութեան բացատրելու հին ճանապարհը. նա իրան նպատակ էր զբրել պարզել իրաւունքի բուն ժողովրդական գաղափարը—այն ձևերում, ինչպէս որ արտապայտել էին նրանց ժողովրդական աւանդութիւնը և բանաստեղծութիւնը, այն այլարանական (սիմւոլիկ) գործողութիւնների մէջ, որոնց վրա մինչեւ այն ժամանակ քիչ ուշադրութիւն էին դարձնում և որոնք մնացին իրեւ սկզբնական իրաւունքի հետքեր, —այն իրաւաբանական սովորովթների, ասացւածների, առածների մէջ, ոսոնք պահպանւած են

հին լիշտառակարաններում (Weisthümer) և ժողովրդական լիշտութեան մէջ, — վերջապէս, համեմատութիւններում ուրիշ աղքերի մօտ դիտւած իրաւարանական հնութեան նման երեսոյթների հետ, — մի խօսքով՝ այն ամեն արտալայտութիւնների մէջ, որոնք հին-ժողովրդական աշխարհակեցողութեան կնիքն է-ին կրում իրանց վրա։ Այդպիսի մի աշխատութիւն դեռ չէր ունեցել բուն իրաւարանական դրականութիւնը. դա չէր էլ մըտնում այդ դրականութեան մէջ, բայց նա տալիս էր հնագոյն իրաւարանական կայութեան մի զարմանալի նկարագիր և առաջին փորձը նոր դիտութեան՝ իրաւունքի համեմատական ուսումնասիրութեան։

«Գոխմն ապահովապէս տեղաւորւեց հին նկարէն հաստատութիւնների ոօմանտիկ մշուշում, ասում է նրա լաւագոյն քրն-նարատններից մէկը *), — և միթէ զարմանալի է, որ դրանց ետեից ներկան երբեմն չէր գոհացնում նրան։ Նա քիչ էր հասկանում կեանքի կարիքները, որոնք հարկադրում են գործերի ցամաք ու րիտ ընթացք, և համարեա ափսոսում էր իրաւունքի հին ալլարանական գործողութիւնների գանգաղեցնող մանրամասնութիւնների մասին։ Այսուեղ գեղագիտական (էսթէտիք) կողմը շատ հեշտ յափշտակում էր նրա միտքը։ Նա ցաւում էր այն մասին, որ իր տնային զարգացումը ինքն-իրանից՝ ընդհատւած է։ Եթէ քրիստոնէական և հոռոմէական իրաւունքը չը միջամտէին և չը խսնդարէին այդ զարգացումը, կարծում է նա, միայն այն ժամանակ մենք կարող էինք դասել գերմանական իրաւունքի այս պատկերաւոր և բարոլական հիմունքի իսկական արժանաւորութեան մասին։ Մինչև անդամ գէպի ժողովրդի ստորին դուսակարգերը տածած ազնիւ գեմոկրատիական համակրութեան գիծը, որ անցնում է բոլոր գրւածքի միջով, կարող էր՝ իր կարգով, զօրացնել նրա ալլ հակումները։ Նկատի առնելով արդի գործարանների բանւորների դրութիւնը՝ հին ճորտական կախումը և ստրկութիւնը հեղինակից յայտնի չափով գովասանքի են արժանանում։ Համեմատաբար մեր բանտերի հետ՝ հին պատիժները՝ նաև հաշմանդամելլը, նրան համարեա մեղմ են թւում։

*) Scherer, I. Grimm, Բեռլին, էջ 139.

Նորագոյն իրաւական դիտակցութեան այն պակասութիւնը, որ պատմական դպրոցը ժառանգեց Մեօքերից, ալստեղ նորից երևան է դալիս....»

Գիտնական հետազոտողը՝ անշուշտ, ոօմանտիկ է հանդիսանում ալստեղ. իր ճոխ տեղեկութիւնները նա գունաւորում է հնութեան բանաստեղծական գաղափարացումով:

Նոյն տրամադրութիւնով տոգորւած է և նրա հոչակաւոր « Դիւցաբանութիւնը »: Առաջաբանի առաջին էջերից Գոխմմ սիրով է խօսում աղդալին հնութեան մասին և զալրովթով նրանց վրա, ով չէ կամենում կամ չը դիտէ գնահատել անցեալ ժողովրդակոն կեանքի լիշտակարանները, և կամ միայն բարբարոսութիւն է նրանց մէջ տեսնում: Գիրքը սկսւում է քրիստոնէութեան եւրոպա տարածւելու նկարագրութիւնով, որի առաջ սակաւառսակաւ ընկնում և անհետանում է հեթանոսութիւնը: «Քրիստոնէութիւնը ժողովրդական չէր: Նա եկաւ օտար աշխարհից և կամենում էր դուրս մղել հին տնալին աստւածներին, որոնց յարգում և սիրում էր երկիրը: Այդ աստւածները և նրանց պաշտամունքը կապւած էին ժողովրդի աւանդութիւնների, հաստատութիւնների և սովորութիւնների հետ. նրանց անունները առաջ են եկել մալրենի լեզւից և սրբագրծւած են հնութիւնով. թագաւորները և իշխանները իրանց ցեղը սերում էին զանազան աստւածներից. անտառները, լեռները, լճերը նրանց մերձաւորութիւնից վառ կերպով սրբագրծում էին ստանում: Այդ ամենից ժողովուրդը պիտի հրաժարւէր և այն, ինչ որ իբրև հաւատարմութիւն և անծնանւիրութիւն է առհասարակ գովաբանում, նոր հաւատի քարոզիչների կողմից լայտարարւում էր իբրև մեղք ու յանցանք և հալածանքի ենթարկում: Սուրբ վարդապետութեան ծագումը և տեղը ընդմիշտ անշատւած էր հեռու երկիրներ, և մալրենի վայրերի վրա կարող էր փոխադրւել միայն երկրորդական, աւելի նւազ պատիւք: — Նոր հաւատար գալիս էր օտար լեզւի ուղեկցութիւնով: Տեթանոսներին քրիստոնեալ դարձնողները խիստ բարեպաշտ, չափաւոր, մարմնական ցանկութիւնները զսպող, յաճախ գրծուծ, անհանգիստ բնաւորութեան տէր մարդիկ էին, որոնք ըստրկական կախում ունենալով հեռաւոր չոռմից, պէտք է ան-

դադար վիրաւորէին ազգային ղղացմունքը: Նրանց համար սարսափելի էին ոչ միայն բիրտ, արիւնոտ զոհաբերութիւնները, այլև հեթանոսութեան պատկերաւոր, կենսուրախ կողմք: Բայց ինչ որ անկարող էին անել նրանց խօսքը և հրաշաղործութիւնը, նորադարձ քրիստոնեաները յանախ կատարում էին այն՝ հրով ու սրով յանառ. հեթանոսների դէմ: Քրիստոնէութեան յաղթանակը՝ խոնարհամիտ, պարզ հոգեոր վարդապետութեան յաղթանակ էր՝ զգալական, կատաղի, վալրադ հեթանոսութեան դէմ: Հոգու փրկութեան և խոստացւած երկնքի (արքայութեան) համար մարդս տալիս էր իր երկրաւոր ուրախութիւնները և իր նախնիքների լիշտատակը: Շատերը հետեւում էին սրտի ներքին թեկադրութեան, ուրիշները՝ ամբոխի օրինակին, շատերն էլ նաև անխուսափելի բռնութեան տպաւորութեանը: Թէալէտե մեռնող հեթանոսութիւնը դիտմանք քօղարկուում է տարեգիրների կողմից, սակայն երբեմն մորմօքիչ գանգատ է երևան գալիս հին աստւածների կորստեան պատճառով, կամ ազնիւ ընդդիմադրութիւն՝ բռնի մացրած նորութեան դէմ...»

Գիտնականը անտարբեր չէ մնում. ընդհակառակը, նա իր սրտին մօտ է ընդունում այդ գանգատը. հեթանոսութիւնը երկար դարեր շարունակ ժողովրդի ներքին կեանքն էր ներկայացնում. նրա մէջ կաղմւեցին ոչ միայն սկզբնական բրտութեան դժերը, այլև ժողովրդի լաւագոն բարոյակտն ծգտումները, որոնք նրա կրօնը դոյացրին. հետազօտողը քննում է՝ ինչ է ոչընչացրած և ինչ է մնացել, և սրա միշոցով վերականգնում է հեթանոսութեան այս նախնական աստւածալին աշխարհի: Առաջին տեղում են — գլխաւոր կառավարող աստւածներ, կրօնական պաշտամունք, լեաոյ՝ երկրորդական աստւածներ և դիցուհիներ, ստորին առասպելական էակներ, հականեր և այլն. ապա՝ արարչութեան աւանդութիւններ, տարերքի և բնութեան ոյժերի, աշխարհի սկզբի և վախճանի մասին. բնութեան կեանքը, նրա առասպելական ազգեցութիւններով և յարաբերութիւններով դէպի մարդը — ծառեր և կենդանիներ, երկինք և աստղեր, օր և գիշեր, արև և ձմեռ. գաղափարներ ճակատագրի մասին. միշնադարեան մտապատկերներ սատանայի մասին, կախարդութիւն և այլն, թովկութիւն և անէժք: Մի խօսքով՝ սա մի լայն մը-

տածւած և լայնօրէն կատարւած ժողովրդական կրօնի պատկեր է ոչ միայն նախնական հեթանոսութեան, այլ և նրա վերջնադրյան կերպարանափոխութիւնների՝ դէպի միջնադարեան ժողովրդա-քրիստոնէական դիւցաբանութիւնը։ Այս պատկերը զբուխ բերելու համար գործ է դրւած փաստական նիւթերի մի ահապին պաշար՝ առաջ երբէք չը հաւաքւած ալնպէս առատորէն հին բանաստեղծական դրոյցներից, հարազատ և օտար պատմիչներից և տարեղիրներից, նորագոյն հեղինակների մօտ յիշւած հնութեան բազմատեսակ արծագանքներից, ժողովրդական սովորովթներից, ուրիշ աղջերի դիւցաբանութեան համեմատութիւնից—և այս բոլորը բացատրւած բանասիրական դիտութեան նոր միջոցներով։

Գոխմմի գիրքը (իհարկէ, մատչելի է միայն ձեռնհաս ընթերցներին) զօրեղ տպաւրութիւն գործեց դրական աշխարհում։ նա ընդունւեց իբրև մի «հանճարեղ զիւտ»։ Երկար տարիների ընթացքում Գոխմմի հեղինակութիւնը անհեղեղելի էր. մի շարք գիտնականներ ձեռնամուկն եղան ուսումնասիրութիւնների նրա ցոյց տւած ճանապարհով,—նրա ազդեցութեան յատկապէս արս իսկ ժամանակը անդրադարձաւ և նրա ոռւս հետևողների և շարունակորների վրա,—բայց, վերջապէս, այս տեսականութիւնը հանդիպեց լուրջ առարկութիւնների և սահմանափակումների։ Գիտութեան զարգացումը, որին նա այնքան նպաստեց, առարկալի նոր կողմեր գտաւ, —հետազոտութիւննը աւելի հեռու գնաց, որը՝ չը նւաստացնելով Գոխմմի պատմական երախտիքը, նրա առաջին հիմնական մտքի բեղմնաւոր լինելն էր վկայում։

Ուսումնականների հետեւել սերունդը, որոնք արդէն շահագործեցին գիտութեան նոր գիւտերը, գտնում էր, որ Գոխմմի կողմից սակաւ է օգտւել ազգային վէպի դիւցաբանական նիւթերից, իսկ միւս՝ թէ դիւցաբանութեան մէջ նա աւելին է մտցրել, քան կարող էր ալդ թոյլ տալ խիստ քննադատութիւնը, որը եթէ լինէր՝ արդարեւ, չէր կարող եւեան գալ այնպիսի մի ոգեսորւած և բանաստեղծական զրւածք։ Գոխմմի եղանակներից և հայեցակէտից բնէն է կասեցնում նոր հետազոտողներին։ Շէուր հետեւել կերպով է բացատրում նրա զրւածքի այդ անբաւարար կողմը։

«... Այստեղ ընդունած ու դորժադրւած են՝ իրեւ դիւցաբանական նիւթ՝ մի շարք այնպիսի աղբիւրներ, որոնց իրաւունքը դրա վրա առնւազը շատ կամածելի է։ Գալով հեքեաթ-ներին՝ նկատելու է, որ նրանց պիտանութիւնը դիւցաբանութեան համար կորցնում է իր արժեքը արդէն այն պատճառով, որ գտնել է նրանց օտար ծագում ունենալը։ Անտարակոյս, շատ օտար տարրեր մտած են և վիպասանական զրոյցների (Sage) մէջ, ուստի հաստատուն տեղեկութիւններ կարելի է բաղել նրանցից՝ միայն շատ մեծ զգուշութիւնով։ XIII դարի բանաստեղծութիւնը ապագայ հետազոտողին նոյնպէս կը զանայ տալ այն դիւցաբանական աւարը, որը կարծես թէ հայթալիթել էր նա Յակոբ Գոհմմին, և գաղափարատիպի կամ բանաստեղծութեան մարմնացումը չէ կարելի այլևս Կողանի կամ հիւսիսային զրոյցի արձագանքներ համարել։ Վերջապէս, թէ քանի՛ քանի՛ նիւթեր, ինչ որ Յ. Գոհմմ գերմանական և հեթանոսական էր համարում և վերցնում, պիտի ըրիստոնէական դիւցաբանութեան վերագրութին, —դա արդէն բազմիցս լոյտնւեց նորագոյն հետազոտութիւնների մէջ և գուցէ գեռ էրեւան գայ շատ դէպքերում։ — Շատ սակաւ է պատահում, որ մեծ մարդիկ այնպիսի ընկերներ կամ աշակերտներ ունենալին, որոնք ուղղէին նրանց գրւածքները լոտկապէս այնտեղ, ուր թողւած է վերջը, որին կարելի է շարունակութիւն կցել։ Աւելի յանախ հակառակն է լինում, և դրա օրինակը՝ գերմանական դիւցաբանութեան ճակատագիրն է։ Յատկապէս զրբի թոյլ կողմերը արդիւնարար հանդիսացան և մրցակցութիւն լուղեցին։ Հեքեաթները և զրոյցները այժմ յանկարծ չափազանց կարեսոր երեացին՝ ոչ թէ լոկ իրեւ ժողովրդի ոգու արտալայտութիւններ և իրեւ ճշմարիտ բանաստեղծութիւն, այլ իրեւ խուսափող աստւածների հետքեր, որոնց ծեր անհրաժեշտ է զգուշաբար ընդօրինակել և հետազոտել չափազանց ինսամքով։ Սկսեցին ծեռնարկել զրոյցների և հեքեաթների անվերջ հաւաքումների։ Դրա հետ միասին կատարւեցին մնացած հին ծէսերի արդարեւ թանկագին գիւտեր։ Բայց մեծ մասով այստեղ շատ բան աւելորդ էր երեւում։ Անխոնց կերպով զրի էին առնւում և նորից հրատարակւում միւնոյն պատմւածքի անթիւ տարրեր օրինակները (վարիանտ)։ Սրանից զատ՝

հերեաթները և զրոյցները պէտք է օգնութեան հասնէին կենդանի առասպելների պահասութեանը, որը զգում էին շատ նիշտ: Երբ որսորդը՝ իր անձի պաշտպանութեան համար, խոթում էր բոռնցը առիւծի բերանը, լիշում էին պատերազմի հիւսիսային թօռ աստծուն, որը՝ իբրև աւանդ, կոխում էր իր ձեռքը ֆէնրիր գալիի բերանը: Երբ առևանդում էին խիստ հսկողութեան տակ պահւող կանանց, կասկած չէր կարող լինել, որ յափշտակողը Փոէլը աստւածն էր, իսկ յափշտակւածը՝ գեղեցիկ վիթխարի կին հեռդաւ: Երբ սպանւում էին որևէ հսկաներ՝ դրանում տեսնում էին ամպրոպի աստւածին: Ինչ որ կարմիր գոյն ունէր աշխարհում՝ իսկոյն եղրակացնում էին թէ դա գաղտնի յարաբերութեան մէջ է գտնում շիկամօրուս ամպրոպի աստւածի հետ: Էշն էլ՝ որ երկու կողմից ոսկի է գուրս թափում, բնականաբար պիտի սերէր հարստութիւն բաշխող Վօդանից, թէև սա նախնաբար մի համեստ դէմք է իտալական նօվելլայից: Վերջին տարիներս համարձակ գիւտ անողների եռանդը փոքր ինչ պաղեց, և հասպճեալ ուրախութիւնը տեղի տւեց մի փոքր սթափման: Թէ գերմանական դիւցաբանութիւնը սխալ ճանապարհի վրա էր կանգնած՝ այժմ կարելի է ալդ հաստատել առանց երկիւլի, և մնում է միայն ցաւել, որ պէտք է խոստովանել, որ ալդ ճանապարհը ցոյց տւեց Յակոբ Գոփմնը...):*)

Գոփմմի գրքի մասին յայտնւած կարծիքը ուրոյն ուսումնականի անձնական հայեացը չէր. գիտութիւնը անդադար ընդգրծակում էր դիտողութիւնների հորիզոնը, սաստկացնում քըննադատութեան պահանջները, և, վերջապէս, Գոփմմի հալեցակտից շեղեցնում էր նրա լաւագոյն և անձնէր աշակերտներին Ալսպէս էր Վիինելմ Մաննհարդտ՝ գերմանական դիւցաբանութեան ամենաեռանդուն հետաջատողներից մէկը: Մէջ ենք բերում նրա քննադատական նկատողութիւնները՝ բացատրելու խնդրի դրութիւնը բուն իսկ գերմանական դիտութեան մէջ, որ մեղ մօտ՝ Ռուսաստանում, կամ քիչ էր ժամօթ կամ սակաւ՝ էր գնահատում: Երբեմն հաւատարիմ հետևող Գոփմմի՝ այս երեւելի ուսումնականը իր գործունէութեան վերջին տարիներին՝

*) Scherer, I. Grimm, էջ 148—150.

նկատի առնելով դիտութեան նոր գրաւումները, փոխեց իր աշխատութիւնների ուղղութիւնը և իր վերջին ընդարձակ զրւածքի առաջաբանում՝ աւանդելով իր հայեացըների պատմութիւնը՝ դիւցաբանական դիտութեան շարժման հետ միասին, այսպէս է բացատրում Գոկմմի «Դիւցաբանութեան» նշանակութիւնը:

«Գոկմմի ճարտարարւեստ, հիմնական երկասիրութիւնը, ինչպէս բոլոր ալստեսակ պատմական գործեր, լոյս տեսաւ ոչ առանց նախորդների: Արդէն Ռէֆօրմացիայի ժամանակներից՝ մասսամբ բացատրելու համար կրապաշտութեան արդելումը հաւատապատումի մէջ, մասսամբ հումանիտար ազգային-հնասիրական ծգառումներից, մարդիկ՝ ինչպէս Ազրիկօլա, Պօռտան, Առնկիլ, Դեօդեռլէն, Շիւց, Մօնէ և Ֆինն Մագնուսէն ճանաչեցին և ուսումնասիրում էին ուրոյն ուրոյն սնապաշտութիւնները, սովորութիւնները և ժողովրդական դրոյցները՝ իրու մնացորդներ հեթանոսական դիւցաբանութեան: Գոկմմի հանճարը՝ զինւած մտակարգութեան (կօմքինացիա) դարմանալի շնորհով, որ դիտէր միևնույն ժամանակ իրրև մանուկ միամտարար զգալ հնութեան ողին, առաջին անգամ ժողովեց ամենաընդարձակ ծաւալով նման աղբիւրները ի մի ամրողութիւն, միացրեց նրանց աղքատիկ քանակով պահպանած անմիշական վկայութիւններով՝ գերմանական հեթանոսութեան մասին, և որոշ կազ հաստատեց դրանց և լեզւի մէջ, (որին պատմութիւնը ըմբռնելու ընդունակ դարձրեց) մեր հնութեան սովորութների ու աշխարհայեցողութիւնների և ցեղակից հիւսիսի դիւցաբանութեան մէջ: Այն ժամանակ առաջին անգամ գտնւեց Կօրումրի ծանօթ ծուն, և աղքերին ճանապարհ ցոյց տրւեց, որը թւում էր, թէ կարող էր տանել նրանց լայնածաւալ Mare incognitum—ան ծանօթ ծովի վրատով իրանց բուն մանկութեան ոսկեղէն աշխարհը, և տարածելով նրանց լիշողութիւնները իրանց իսկ մասին՝ դէպ լետ, դէպի հեռաւոր անցեալի շրջանը, շատ բան կարող էր աւելացնել նրանց կեանքի և նրանց անծնաւորութեան մասին: Ապշած ժամանակակիցների աչքերի առջև վերականգնեց հին-գերմանական կրօնի պատկերը՝ իր պիսաւոր կէտերում, ալնքան նման,—որ նա օրինակ կը մնայ միշտ՝ թէև դեռ կարօտ մշակելու և կատարելագործելու լետագալ հետազօ-

տութիւնով, —և միւնոյն ժամանակ այնքան անսովոր նոխ, որ նա այժմ*) համարեա կէս դար տիրապետում է զիտութեան վրա: Փոքրառփոքր դա սկսում է հետազօտողների ազատ հոգեոր սեփականութիւնը դառնալ և ենթարկում է այնքան անհրաժեշտ քննադատական գնահատման այն նպատակով, որ նրա թերութիւնները հեռացւելով, ինըը հանդէս դայ դուած և երիտասարդացած: Հազիւ թէ երբէք զիրքը այնպիսի մեծ և զօրեղ ազդեցութիւն է մեռք բերած եղել, ինչպէս սա: Ազգային գործ դարձաւ՝ հաւաքել ու մեխել սովորութները, զրոյցները, հեքեաթները, մասպաշտութիւնները, երգերը՝ մի խօսքով, ամեն տեսակ բերանացի տւանդութիւնները՝ որպէս հայրենի բնութեան իշխառակարաններ... Այս ծգառումին ենք մենք պարտական՝ մասսամբ սքանչելի ժողովածուների բազմութիւնով: Մեր օրինակին սկսեցին հետեւել Եւրոպայի և ուրիշ ցեղերը և ամենից եռանդուն կերպով նրանք, որոնք համարեա ոչինչ տեղեկութիւն չունեին իրանց նախնիքների կրօնի մասին, և այդ նաև պարհով յոյս ունէին պարզել՝ թէ ինչպէս էր արտայալտուած իրանց ժողովրդի ոգին իր ամենափելալական մտապատկերներում՝ ազգային դեռ անարատ պահւած կենցաղի շրջանում՝ նախ քան քրիստոնէութեան լնուններ (օրինակ՝ Ունդարացիք, Սլաւոնացիք): Աւելի անտարբեր մնացին ուրիշ ազգերը, (օրինակ, Սկանդինավացիք, ումանական ցեղեր), որոնք՝ հարուստ տեղեկութիւններ ունենալով իրանց նախնիքների մասին, ոչինչ ծգտում չէին զգում բազմացնելու այդ գանձը, —մեծ թէ փոքր, —նոր՝ մինչև այն ժամանակ այնպէս արհամարհւած, հանքերից»:

Հեղինակը նկատում է, թէ ժամանակի զուտ աղդային տենդենցի այս տիրապետութեան շնորհիւ, և իր սեփական առաջին աշխատառութիւնները նւիրւած էին կենդանի ժողովրդական աւանդութեան՝ «որպէս բուն դերմանական դիւցաբանութեան կարծեցեալ գլխաւոր աղբիւրին», — անգամ և այն ժամանակ, երբ նա տեսաւ՝ թէ անհրաժեշտ է հիւսիսալին դիւցաբանութիւնը ենթարկել ամրողական պատմաքննադատական հետազօտութեան: Նա յուսով է թէ «թանկագին ուսուցչի

*) Գրւած է 1877 թ.:

ստւերը» չի զայրանայ, եթէ նրանք,—որոնք կանգնած են նրա ուսերի վրա՝ երախտաղէտ խոստովանութիւնով հանդերձ՝ նրանից ստացած հաստատուն ժառանգութեան համար, — տեղի տան նաև գիտակցութեան, թէ նրա հոլակապ աշխատութիւնը շատ կողմից մնում է դեռ թերի և անգոհացուցիչ, թէ նրա կանգնեցրած շէնքը՝ լաճախ իր հիմքերում, ծուռ ուղղութիւն է ունեցել և սրանով նպաստել նրա վրա յաջորդաբար կառուցւող շինութեան անպէտը լինելուն»: «Քննադատութիւնը՝ մերժելով բոլորը, ինչ որ սխալ է և չապացուցւած, — շարունակում է Մաննարդտ, — կը պակսեցնէր Գոխմի գրքի ծաւալը գուցէ կիսով չափ: Այժմ տեղը չէ այդ աւելի մանրամասն բացատրելու. ևս մատնացոյց կանեմ միայն մի քանիօր: Յակոբ Գոխմ շատ նշանաւոր քայլ արեց դէպի առաջ, երբ նայեց դիւցաբանութեան վրա՝ ոչ որպէս գիտակցական վերացականութեան արտադրութեան, այլ որպէս ժողովրդական ոգու անդիտակցօրէն՝ քերթողաբար ստեղծող արդիւնքի վրա՝ հաւասար լեզւին: Սրանով նա հինգ դիտականունքն ըմբռնելու աւ միայն գերմանական, այլև յունական ու հառոմեական և այլ ամեն մէ դիւցաբանունիւնն: Բայց երբ որ նա անցնում էր տեսականից գործնականին՝ նա մի որոշ տարբերութիւն չէր անում ժողովրդական առասպելի խսկական պատկերի և լաճախ՝ համարեա մինչեւ նոյնութեան հասած նրանց նման՝ սուրբեկտիւ բանաստեղծների փոխաբերութիւնների (մետաֆօրա) և անձնաւորումների մէջ: Նրան օտար էր և այն հայեացը, որին ճանապարհ էր հարթել արդէն չայնէ*) և աւելի և՝ Դաւիթ Շտուառաւ, թէ առասպելը հաստատում է մի որևէ որոշ աշխարհայեցողութեան կամ մտածելու եղանակի վրա, որոնցով ամեն մի աղդ անհրաժեշտորէն պարտական է որոշել զարդացման յայտնի աստիճաններում: Մտածելու ալս եղանակը՝ կրթութեան առաջդիմելովը, մնում է ժողովրդի լետամնաց ստորին խաւերի սեփականութիւն և մասամբ պահպանում է նրանց մէջ՝ որպէս համոզմունք, անցեալի մտաւոր արդիւնքները, անցեալի՝ որը թեւակոխել անցել են աւելի զարդացած դասակարգերը, մասսամբ իշեցնում է իր

*) Նշանաւոր գիտնական բանասէր:

մակերևոյթին, իրան է յարմարցնում, գտղափարները և վերանորոգւած կամ դրսից փոխ առած բարձրագոյն կրօնի արգասիքները (քրիստոնէութիւն, իսլամ, բուդդականութիւն և այլն) և վերակազմում է նրանց ըստ իր ստորագութիւնների (կատեգորիա), մասամբ շարունակում է երևան գալ տարրեր նիւթի մի քանի նոր առասպելական մտապատճերների ձևով: Այդ տարրերութիւններին երկրորդական նշանակութիւն տալով Յակոբ Գոհմմ հակած պիտի լինէր՝ մեր ժամանակի ժողովրդական խաւերի մէջ եղած համայն առասպելականը ընդունել իրքև մըրուր, նոր հագուստ, իրրե նախնական հեթանոսական զիւցաբանութեան թուլացած կամ աւելի բիրտ ձեր և միւնոյն ժամանակ՝ ուղիղ գծով շարունակող արծագանք զիւցաբանութեան յատկապէս այն ազգի, որի մօտ գտնւած է այս կամ այն աւանդութիւնը: Որոինետեւ նրա աչքից վրիպեց և այն, որ պատմութեան ընթացքում ազգաբնակութիւնների և դասակարգերի անընդհատ շարժումը ժողովրդի նաև ստորնագոյն խաւերում նպաստում էր դաղափարների և աւանդութիւնների ընդարձակ փոխանակութեան մինչև անդամ օտար երկների հետ: Վերջապէս, նա չափազանցնում էր լեզուի վրա ունեցած առասպելի ազդեցութիւնը: Այս սխալների շնորհիւ Գոհմմ շատ դէպքերում իր հետախուզելիք գերման-հեթանոսական զիւցաբանութեան վկայութիւնների տեղ ընդունում էր և միշնադարեան բանաստեղծների զուտ քերթողական անձնաւորումները և այն աւանդութիւնները, որոնք առաջացել էին քրիստոնէական սինոլիկալից կամ կղերականների դիտաւորեալ պատահական երևակալութիւններից, որպէս և զանազան հանրամարդկալիին և օտարերկրեալ մնապաշտութիւնները՝ փոխ առւած մի այնպիսի ժամանակ, որը դժւար է որոշել: Բայց մանաւանդ... մեծացնում էր նա չափազանց հիւսիսալիին և գերմանական զրոյցի նմանութիւնը, երբ՝ ըստ հին աստւածաբանութեան եղանակի, էղդալի առասպելները համարում էր համանման հայեացընների մի ամբողջութիւն, որոնք հիւսիսալիին գերմանների բուն ժողովրդական կրօնի կնիքն էին կրում, այն ինչ՝ իրապէս, այդ առասպելների մէջ պէտք է տեսնել պատմական զարգացման վերջին արդիւնքը, ուր պիսաւոր բաժինը պատկանում է վերջին դարերին:

նախ քան քրիստոնէութեան մուտքը, — ուրեմն հարաւային գերմաններից զատւելուց յետով, — և այդ ժամանակաշրջանում՝ արևելաբական գրականութեան՝ առաւելապէս բանաստեղծների գիտակցական աշխատութեան, որոնք հետզհետէ աւելի մշակեցին իրանց նախորդների մտքերը ու պատփերները։ Բուն հին ժողովրդական առասպելների պաշարը էդդալում շատ աննշան է։ բայց յաճախ դեռ հնարաւոր է մատնացոյց անել այն աստիճանները, որոնցով անցնում էր առանձին առասպելների մշակութիւնը բանաստեղծների ծեռքով։ Այս դիւցաբանութիւնը աւելի մեծ չափով, քան ընդունում են առհասարակ Գոհիմնից յետով, սկանդինաւեան հիւսիսի ինքնատիպ արդիւնք էր՝ պայմանաւորւթ իր ծննդավայրի բնութիւնով և պատմութիւնով։

«Այսպէս ուրեմն, շարունակում է Մաննհարդտ *), ստիպւած ենք դուրս հանել գերմանական դիւցաբանութիւնից աստւածների մի ամբողջ շարք, որոնց մտցրել էր Գոհիմն մեթօդի սխալմունքով։ Նրա աշակերտները գերմանական գրականութեան մէջ կրկնում էին և յաճախ մինչև վերջին ծայրայնութեան էին հասցնում իրանց ուսուցչի սխալները։ Հաստատուն շահ էր խոստանում ծեռնարկած հսկայական աշխատանքի միայն այնպիսի շարունակութիւնը, որը ամենից առաջ կարգի բերեր բուն նիւթը և առանց միտ դնելու նախապէս առաջ բերած արդիւնքին՝ մի կողմից բաղդատէր իրար հետ ժողովրդական աւանդութիւնները, միւսից՝ մերձագոյն ցեղակից երևոյթների հետ...»*)

Գոհիմնի «Դիւցաբանութեան» զօրեղ ազգեցութիւնը առաջ բերեց հետազոտողների բազմաթիւ դպրոցներ։ սրանք մի կողմից եռանդուն կերպով ծեռնամուխ եղան հաւաքելու հերեաթներ, աւանդութիւններ և այլն, — որոնք Գոհիմնի ծեռքի տակ այնպիսի գոհացուցիչ նիւթ էին մատակարարում հին դիւցաբանութեան բացարութեան համար, — միւսից՝ մշակում էին հետազոտութեան բուն մեթօդը։ Առանձնապէս կարևոր նոր ուսումնասիրութիւններ կատարեցին կուն, Շվաոց, Մաննհարդտ և ուրիշները։

*) Mannhardt, Wald-und Feldkulte, II Teil, Vorwort, SS. VIII—IX.

*) Пыпинъ, Ист. русск. этнографіи II, էջ 93—103:

Գոխմմ՝ իր հին դերմանական հեթանոսութեան և միջնադարեան հանրամատչելի կրօնքի պատկերում զեկավարւում էր գիտական-ազգայիրական նպատակով. նա կամենում էր պաշտպանել հնութիւնը՝ վերաստեղծելով այն աշխարհայեցողութիւնը, որով ապրում էին նրա ազգի հեռաւորագոյն նախնիքները, դրանել նրա մնացորդների մէջ վմեմ և բանաստեղծական գծեր, որոնք այնքան երկար ժամանակ աննկատելի էին մնացել այդ հրնութեան մէջ, մատնացոյց անել նրանց մէջ այն բարոյական արժեքը, որով պատմութեան ասպարէզ դուրս եկաւ ազգը իր առաջին քայլերից... Գիտութեան առաջ դրաւծ էին ապա այլ խնդիրներ. մի կողմից գիտնականները աշխատում էին բաղմացնել գիւցարանական նիւթը՝ շտապելով հաւաքել այն՝ ժողովրդի բերանից. միւսից՝ կարիք էր զգացւում որոշելու Գոխմից դեռ լիովին չը բացատրւած հարցերը,—հարթելու հետազոտութեան ճանապարհը և, վերջապէս՝ պարզաբանելու դիւցարանութեան ստեղծման բուն պոսցեսը, առասպելի դրացումը, նրա անումը, նրա՝ որպէս բանաստեղծութեան և կրօնքի՝ կարեւորութիւնը, նրա կերպարանափոխումները և անկումը և այլն: Մանաւանդ նշանաւոր հետազոտութիւններ կատարեցին վերը լիշած գիտնականները: Կարճ միջոցում արդէն մեծ աղդեցութիւն գործեցին Ալյալբերտ Կունի աշխատութիւնները, որ համեմատական լեզւագիտութեան դլխաւոր հեղինակութիւններից մինն էր: Կուն տարածեց Գոխմմի մեթօդը հնդիկ-եւրոպական շրջանի վրա, և մի կողմից քննեց սանսկրիտի լիշատակարաններում առասպելի զարդացումը՝ հնագոյն ներկալացուցիչներից մինչև ամբողջ մշակւած սիստեմը, միւսից՝ ցոյց տևեց այն նախնական սկզբունքի գտնելու հնարաւորութիւնը, որ հանգչում էր այդ կրօնի հիմքի վրա և գարծաւ աղբեւը լունական և հոռմէական դիւցարանութեան գոյանալուն: Այս արդիւնքների շնորհիւ խախտեց հին գաղափարը ժողովրդի գիւցարանութեան մասին՝ որպէս պատրաստ սիստեմի, և դիտութեան ինդիր դարձաւ նրա լարդացնան հարցը: Գերմանական և առհասարակ ամեն մի նոր-եւրոպական դիւցարանութեան հետազոտութիւնը անխզելի կապերով կապւեց կասիկ և ընդհանրապէս՝ արիական ցեղերի գիւցարանութեան բացատրութեան հետ: Այս նոր աստի-

հանի վրա գիտութիւնը քանի գնում աւելի լայն հորիզոն էր գրաւում: Բացառապէս աղդային հայեցակէտը լայնանում էր մինչև աղդերի համարն հնդիկ-եւրոպական գերդաստանի հետազօտութիւնը. Մաքս Միլլերի հետազօտութիւնները ուղղւած էին առասպելի բուն էութեան ուսումնասիրութեան. «Ժողովրդական հոդերանութեան» սահմանումը կրօնական մտածութեան ընդհանուր օրէնքների խնդիրը դնում էր հանրամարդկային հողի վրա: Առասպելին և կրօնին վերաբերեալ գիտական հետախուզութիւնների այս ընդարձակ զարդացումը Մաննհարդտ^{*)} վերադրում է յատկապէս կունի արծարծումներին^{**}):

Գերման-ժողովրդական աւանդութիւնների հաւաքճան դործում՝ դեռ նոյն դարի 40 - ական թւականների սկզբից, կունի աշխատակիցն էր մի ուրիշ գիտնական, որ յետոյ նոյնպէս հեղինակութեան անուն ստացաւ դիցարանական գիտութեան մէջ. դա՝ Վ. Շվաոյն էր^{***}): Այս ուսումնականները՝ իրանց հաւաքճական աշխատանքների ժամանակ, ուշադրութեան առան այն հանգամանքը, որ մի քանի աւանդութիւնները նրման են կենդանի ժողովրդական հայեցքին՝ բնութեան վրա. դա հարկադրեց կունին դիտելու նման երևոյթները հնդկական Վեդաներում: Շվաոյր եկաւ այն եզրակացութեան, թէ զրոյցների մէջ, որ ոնք մինչև ալժմ կենդանի են մնացել ժողովրդի խաւերում, ամփոփ մնում է այսպէս կոչւած «ստորին դիցարանութիւն», որը մինչև ներկայ ժամանակս պահպանում է նախկին զրութիւնը՝ յետին աստւածների սաղմալին ծեր, թող որ սրանք ծանօթ են ալժմ շատ հին պատմական վկայութիւններից: Այսպէս, ուրեմն, ժամանակակից աւանդութեան մէջ մենք

^{*)} Mannhardt, ibid., S. XVI.

^{**)} Կուն 1852 թւից հրատարակում էր Zeitsch. f. vergleichende Sprachforschung. Նրա հանրածանօթ երկն է Herabkunft des Feuers und des Göttertranks, Berlin, 1859.

^{***)} Նրա գլխաւոր երկերն են. Der heutige Volksglaube u. das alte Heidenthum, mit Bezug auf. Norddeutschland (1862); Der Ursprung der Mythologie, dargelegt an griechischer und deutscher Sage (1860); Sonne, Mond und Sterne. Ein Beitrag zur Mythologie und Culturgeschichte der Urzeit (1864).

ունենք ոչ թէ նւաղած արծագանքներ աւելի զարդացած նախ-
նական դիւցաբանութեան (օրը ենթադրում էր, օրինակ, էղ-
դայում), ինչպէս կարծում էր Դոժմն, այլ յատկապէս հնագոյն
մօսիւներ, որոնցից երբեմն ինքը զարդացաւ: Դրա հետ միասին
նա դիտեց՝ որ շատ կարևոր է, ան փոփոխութիւնները, որոնց
կրում է աւանդութիւնը՝ բերնէ-բերան անցնելով: Իր հետազո-
տութիւններով նախնական աւելի բիրտ աշխարհայեցողութեան
այդպիսի մնացորդների մասին նաև ուրիշ աղգերի դիւցաբա-
նութեան մէջ, Շվառց նպաստեց դիտառթեան յետազայ զար-
դացման: Բայց յատկապէս դիւցաբանական մեկնութիւնների սահ-
մաններում նա՝ սակայն, չը պահպանեց իր առաջին աւելի լայն
հայեցքները: Յետոյ ուրեմն՝ այն է իր գիշաւոր երկերում, նա՝
Կունի հետ միասին, չափազանց անձուկ մտքով էր բացատրում
ժողովրդական դիւցաբանական ստեղծագործութեան բուն աղ-
բիւրը: Բոլոր դիւցաբանութիւնը՝ ըստ այդ բացատրութիւննե-
րի, կայանում էր՝ բնութեան երևոյթների պատկերները երկրի
վրա տեղափոխութեան միայն, և՝ Շվառցի մօտ, յատկապէս մըրկի
և ամպրոպային փոթորկի երևոյթները,—մի տեսութիւն, որ
մանաւանդ դիւր եկաւ մեր՝ Ռուս, հետազոտողներին, շատ մտա-
ցածին կամալականութիւն մտցրեց պատօ-ռուս դիւցաբանու-
թեան աւանդելու մէջ և շատ վնասեց Աֆանասյեվի հոչակա-
ռոր գործին *):

Կունի դիրքը «Կրակի իշեցնելու» մասին լոյս տեսաւ 1859
թ. իսկ փոքր ինչ առաջ՝ 1856 թ., հրատարակւեցին «Օքսֆօր-
դեան նամակները», որոնցով սկսեց հոչակառոր սանսկրիտա-
գէտ, համեմատական լեզւագէտ և դիւցաբան Մաքս Միւլերի
բեղմնաւոր, ինքնատիպ և ազդող գործունէութիւնը **):

Մ. Միւլերը հանդէս եկաւ մի ընդարձակ, ինքնուրոյն տե-
սութիւնով: Ազգերի հնագոյն՝ նախապատմական կեանքում նա
ընդունեց զարդացման չորս շրջաններ: առաջին՝ «հոեմատիկ»
(բառական) շրջանում կատարում էր արմատների և սկզբնա-

*) Поэтическая возврѣнія славянъ на природу, три тома,
Москва, 1865—1869.

**) Մըր երկերի մասին տես վերը, էջ 65—66:

կան քերականական ծեւերի կազմութիւնը. Երկրորդ՝ «բարբառների» շրջանում դոյացաւ երեք հիմնական լեզուների գերդաստանների՝ սեմականի, արիականի և թուրանականի որիշ առանձնացումը. Երրորդ՝ «դիւցարանական» շրջանում կատարւում էր այն տարօրինակ՝ երբեմն անհեթեթ ժողովրդական պատմւածքների կազմութիւնը, որոնք առասպելներ են կոչւում, և որովհետև այս շրջանում արիական և հնդիկ-եւրոպական գերդաստանը դեռ չէր տրոհւած ուրոյն ազգերի, այստեղից ծագեց շատ մեծ նմանութիւն՝ համարեա նոյնութիւն, առասպելների՝ սոյն գերդաստանի ազգերի մօտ: Վերջապէս, չորրորդ շրջանում՝ «ազգերի» շրջանում, առաջ են գալիս ազգային լեզուների և ազդային դրականութիւնների առաջին հետքերը Հնդկաստան, Յունաստան, Իտալիա, Գերմանիա: Առասպելների ստեղծման շրջանին՝ լեզուն որոշուում էր զգալիական, պարզ և հասկանալի բնաւորութիւնով, անւանում էր միայն առարկաները և զգացմունքներին մատչելի նրանց դրութիւնները. մտքի գիտակցական աշխատանք պահանջող գաղափարներ և վերացական բառեր դեռ չը կային, և այդ պատճառով բնութեան երևոյթները, տարւայ և օրուգիշերւայ փոփոխութիւնները, ամպրոպը և մըրիկը մարմնացում էին: Առասպելների ստեղծումը բացատրւում է նախնական լեզվի այս լատկութիւնով և նրա այն երևոյթներով, որ Մ. Միւլլեր բազմանւանութիւն և հոմանւանութիւն է կոչում: Որովհետև առարկաները կոչւում էին ըստ արտաքին նշանների, իսկ այդ նշանները կարող էին բազմաթիւ լինել, ապա ուրեմն միևնուն առարկան կարող էր ստանալ շատ զանազան անուններ, որոնք սոյն դէպքում համանշան կը լինէին: Բայց միևնուն ժամանակ մի նշանը կարող էր պատկանել շատ առարկաներին և դրանք՝ այդ ընդհանուր նշանի շնորհիւ, կարող էին մի անուն ստանալ: Այդ անուններից շատերը փոխարերական էին լինում և երբ՝ ժամանակի ընթացքում, մժին էին դառնում փոխարերութիւնները և փոխւում էր բառերի նախնական նշանակութիւնը, դրա հետեւանքը լինում էր այն, որ հասարակ անունները յատուկ էին դառնում. օր., «Երկինք» նշանակող բառը երկնային աստւածութեան անուն էր դառնում: Սրանից սկրսում էր առասպելը: Այսպէս ուրեմն՝ «որոշ բառերը՝ դիւցա-

բանական դառնալու համար, պիտի կորցնէին իրանց արմատական նշանակութիւնը», հետևարար՝ դիւցաբանութիւնը ժագում է լեզւի անբնական դրութիւնից: Մ. Միւլլեր ուղղակի արտօնայտում է իր երևելի կարծիքը, թէ «դիւցաբանութիւնը լեզւի հիւանդուննեն է»:—Առասպելի վերջուժութեան համար անհրաժեշտ է նախ «զտել» նրան, այն է որոշել նրա էութիւնը յետին ժամանակի կցած յաւելումներից, բանաստեղծական պահումանքներից և այլն, և յետոյ առասպելի էութիւնը պարզում է կամ ուղղակի այն ազգի լեզվից, որին նա պատկանում է (աստւածութեան յատու կ անւան բացատրութիւնը իր հասարակ նշանակութիւնից), կամ ազգակից լեզուների համեմատութիւնից, եթէ բուն լեզուում ալդ բառը մթնացել է: Այստեղից առաջ է գալիս «համեմատական դիւցաբանութիւնը»:

Իսկ ինչ վերաբերում է առասպելների առարկալական (օրյեկտիւ) բովանդակութեան Մ. Միւլլեր՝ արիական առասպելների ուսումնասիրութիւնից եկաւ այն եղրակացութեան, որ համարեա բոլոր առասպելների հիմքը դրւած է արևի դաղափառը՝ հակառակ կունի հայեացքներին, որը՝ նրա կարծիքով, շատ բացառիկ կերպով կապում էր առասպելները ամպերի, մրրիկ և ամպրոպի փութանցիկ երևոյթների հետ:

Վերջապէս, պէտք է յիշել Վիլհելմ Մաննհարդտին այն դիւցաբանների թւում, որոնցից կոչումներ է անում յաճախ Աֆանասյեվը: Մաննհարդտ ամենահանճարեղ և ամենաշանասէր գործիչներից մինն էր ալս շրջանում: Նրա առաջին գրւածքները*), որոնք միայն յատոնի էին Աֆանասյեվին, — ճշգրիտ կրկնութիւն էին Գոհմմի դաղափարների և նրա մեթօդի գործադրութիւնն էին մի շարք նոր հաւաքած փաստերի վերաբերմամբ: Վերջերում Մաննհարդտ, ինչպէս վերը յիշւած է, համոզւելով ալդ մեթօդի սխաներում, իր վերշին երկերի մէջ ընտրեց հետազօտութեան մի նոր ճանապարհ...**)

Մենք յօժարակամ խոստովանում ենք, ասում է Մաննհարդտ, որ կունին աշողեց լուծել շատ առեղծւածներ, շատ դէպքերում

*) Germanische Mythen. Forschungen, Berlin, 1858 և ուրիշները:

**) Пыпинъ, Ист. русск. этнографии, II, էջ 115—119:

պարզաբանել երևոյթների կապը։ Բայց ես չեմ կարող նոյնպէս չը խոստովանել, որ՝ իմ կարծիքով, համեմատական հնդիկ-եւրոպական դիւցաբանութիւնը չը բերեց այն պատուղները, որ այնքան մեծ ակնկալութիւնով սպասում էին նրանից։ Ճիշտ ծեռք բերածը սահմանափակում է մի քանի ուրոյն փաստերով... Յատկապէս՝ աստւածութիւնների համեմատութիւնները (Կունի մօտ), որոնք առաջի բերան շատ ճշմարիտ են երևում, և դուգակշխոների (պարապլել) մեծագոյն մասը, որոնք արւած են «կրակի իշեցնելը» երևելի դրքում՝ իմ համոզմունքովս,—այլ ևս չեն դիմանում խիստ քննադատութեան. Ես երկիւղ եմ կրում՝ մի գուցէ գիտութեան պատմութիւնը մի ժամանակ տեսնի նրանց մէջ աւելի սրամատութեան փայլուն խաղ, քան թէ ապացուցւած իրողութիւններ։ Արդէն այն հանգամանքը, որ նրանք երևան չեն հանում հաստիքուն բեղմնաւոր ոյժ, որը յատուկ էր Գոլիմնի և Բօպպի բանասիրական գիւտերին, պիտի կասկած յարուցանէ նրանց ճշմարտութեան մասին և զգուշութիւն ներշնչէ մինչև անդամ շատ հաւանական երևցած նոյնացումներ դիտելիս... Անտարակոյս, նախնական արիական հալրենիքում՝ բացի լեզւից, կար նաև կրօնական գաղափարների ընդհանուր հիմունք, և Վեդաները պահպանում են նրանց հնագոյն՝ մինչև մեղ հասած, արձագանքները. բայց որ այնտեղից մնացած լինին եւրոպական դիւցաբանութիւնների մէջ և աւելի մշակւած՝ բարդ առասպեկներ, դեռ առկաի հարց է մնում։ Որ մենք աւելի առաջ չենք շարժւել՝ մեղաւորը սկզբունքը չէ, այլ գործադրուած մեղոթը, որի հիմնական սխալը պարմական ըմբունման պակասութեան մէջն է։ Սչըաթող էր արւած այն հանգամանքը, որ դիւցաբանութիւնները ներկայացնում են շատ աւելի խառնաշփոթ և աւելի սակաւ կանոնի ենթարկվող բաղմազան բարդ կազմութիւնների դրութիւն, քան լեզւի համեմատաբար պարզ երևոյթները. դեռ բաւականաչափ պարզ չէր հասկացւած, թէ կոյլտուրական աղբերի հոգեւոր կեանքը երբէք չէր անցնում՝ ոչնչով չը խանդարւած՝ զարգացման ուղիղ գծով՝ ազգային կորիզից, թէ նա ստանում էր բազմաթիւ լոյզեր օտարերկրեալ գաղափարների հոսանքից։ Եւ հետազօտողները, անմիշապէս կապացելով երկու զարգացումների վերջնական կէտերը, զարգացումների՝ ո-

ըոնք կարծւած ելակէտից շատ հեռու էին անցնում, մոռանում էին քննել դրանց դէսի յետ քայլառքալլ, բատ նրանց միշանկեալ և դուցէ թէ գտնելիք՝ աստիճանների —մինչև իրօք հասանելի և յաճախ ոչ հեռու նրանց ետևը գտնւած՝ հիմնական ձեւը: Հետազօտողները՝ չը դանաղանելով էին և նորագոյն աւանդութիւնները, հասարակ նմանութիւնները, բանաստեղծական նմանումները, պատճառաբանական (էթիօդիական) մեկնութիւնները և չօգտւելով նրանցից բատ նրանց իսկական արժողութեան, — ծգծգում էին եւրոպական առասպելները Պո.օկռուստեան մահնի կաղապարով, արդարեւ՝ էին, բայց արդէն աղդային-հնդկական հայեացընների համածայն և դրա պատճառով մոռանում էին նրանց մերծագոյն պատմական պատճառները, նրանց կախումը որոշ ժամանակի և հեղինակների հասկացողութիւնների շրջանից, նրանց բարոյական բովանդակութիւնը և նրանց կապը բնական յարաբերութիւնների տեղական ձևերի հետ: Միմենոյն ժամանակ՝ համեմատութիւնը յաճախ հիմնում էին իրանց բնական կապից հանւած հատւածների վրա և կամ համեմատութեան հիմքը այնպիսի Վեղական հայեացըններ էին դընում, որոնց նշանակութիւնը դեռ ևս պարզւած չէ և տարբեր մեկնութիւնների առարկալ է: Հետազօտողների եղրակացութեան համածայն եւրոպական առասպելները՝ երկն ային երեւոյթների պատկերաւոր ներկայացումի համարեա բացառապէս երկրաւոր տեղափակում (յօկալիդացիա) պիտի լինէին. իսկ անունների և իրերի զուգադիպութիւնը հնդիկ, յոն կամ գերման աւանդութիւնների մէջ, որ առաջ էր բերւում իրեւ ապացուց, թէ նախնական արիական շրջանից է նրանց ծագումը, — շատ անգամ խարուսիկ է լինում ստուգաբանութեան կամ բովանդակութեան կողմից, կամ երկու տեսակիշտից էլ միասին, և դրանով կորցնում է իր արժէքը և ամբողջութիւնը...»

Մաքս Միւլերի մասին նոյն քննդատը աւելի բացասական կերպով է խօսում. եթէ նրա առաջ բերած սկզբունքը (որին շատ մերծենում է Կունը իր վերջին երկերում) ունի որևէ գին՝ նա շատ սահմանափակ է: Կունից և Մ. Միւլերից ոչ պակաս գիւցարանութիւնը սխալ ճանապարհի վրա է շեղել Շվաոցը: «Շատ պէսք է ափառալ, ասում է Մաննհարդտ, որ Շվաոցը

իր վերջին գրւասծքներում չընթացաւ խոհեմաբար այն շաւղով, որ հարթել էր նրա առաջին գործը, այլ մոլորեց մթին երեւակալական աշխարհում, որը մեծ մասով ինքն էր ստեղծել: Այն է չափազանց հապճեպ կերպով ընդհանրացնելով առասպելների մի շըշանից դուրս բերած եղրակացութիւնները, որը նա սկզբում առհասարակ ուղիղ էր դիտում, Շվառց եկաւ հետևեալ հիմնական հայեացքին: «Համայն դիւցարանութեան ելակէտը և կենդրոնը էր՝ ամենատարբեր շրջաններում և դարերում ժագամած էսկիզի և իրերի մասին հաւատացող մտապատկերների քաօսը,— էսկիզների, որոնք երեւան էին գալիս երկնալին զարմանալի երեսութեան մէջ՝ և յատկապիտութեան լանի մէջ մտապատկերների նրանց մասին իբրև կախարդական աշխարհի մասին, որը, կարծես թէ, հասնում էր ալս երկրային աշխարհը միայն իր յայտանիշներով (սիմպատօմ), բայց որը հաւատացող ժողովուրբը կամ լաւ է ասել, մարդիկ բացատրում էին իրանց լստ նմանութեան ալս երկրային աշխարհիս և որի փոփոխութիւնները հետևաբար դարձան նրանց համար պատմութիւն՝ նման երկրային յարաբերութիւններին»: Այս թէօրիայի համար ապացուց ժառանից Շվառցին այն մեթօդը, որի վերաբերութեան մասին դէպի պատմական կրիտիկայի պահանջները պէտք է ասել նոյնը, ինչ որ Կունի մեթօդի մասին: Դա աւելի ևս կասկածելի է... Սակայն միւս կողմէց՝ կարելի է մեծ տարբերութիւն նկատել երկու ուսումնականների եղանակի մէջ: Շվառց չէ բաղդատում իրար հետ երկու զրոյցները իրանց ամբողջութիւնով. միւնոյն ժամանակ ներդաշնակութիւն պահպանելու համար՝ մէկի մասը ստէպ անդամանատում է բոնարար, բայց ամեն տեղ ենում բարձրանում է դէպի նախնական տարրերը: Սակայն այդ տարրերը նա չէ որոնում պատմական վերլուծութիւնով, այլ նրանով, որ քաղում է մի որևէ ուրոյն ինքնաափակ գիծ՝ մի թել զրոյցի ամբողջ անգւածից և յետոյ՝ առանց երկար մտածելու, կապակցում է նրան բնութեան փոքր ինչ նման մի պատկերի հետ: Արդարեւ, չէ կարելի ուրանալ նրա երախտիքը, որ նա իրօք մատնացուց է արել ժողովրդական շատ մտապատկերներ բնութեան մասին և նրանց համաձայնութիւնը բանաստեղծների փոխարերութիւններին: բայց շատերը այդ մտապատկերներից, որոնց նա առաս-

պելների ելակէտ էր ընդունել, գոյութիւն ունին միայն՝ կամ հեղինակի չափազանց բեղմնաւոր երևակայութեան մէջ, կամ նրանում, որ հեղինակը առանձին կերպով է ըմբռնում այս կամ այն բանաստեղծին. և դարձեալ՝ նա միա չէ դնում այն հանգամանքին, որ բնութեան երևոյթների ոչ ամեն մի պատկերաւոր ըմբռնում արդէն առասպել է կամ յետոյ ամեն տեղ առասպել է դառնում, ուստի և նրա գոյութիւնը ամենեին առիթ չէ ընծայում ենթադրելու, թէ դա կը գտնեի առասպելական զրոյցների մէշ...»*)

Ինչպէս գերմանական դրականութեան մէջ Գոհմմի թէօրիան, այնպէս և դրա ռուսական գործադրութիւնները առաջ բերին, վերջապէս, և Ռուսաստանում մասսամբ շատ ինքնուրոյն և անկախ քննադատութիւն։ Աֆանասյեվի առաջին երկերը ռուս դիւցաբանութեան մասին արդէն ընդդիմադրութեան հանդիպեցին Կավելինի կողմից. վերջերը նրա դիրքը առիթ տւեց Կոտլեարեվիկու խիստ նշանաւոր քննադատական յօդւածներին, ուր նիշտ որոշած է Աֆանասյեվի վերաբերմունքը իր թէմային, նիւթի սխալ գործածութիւնը, չափազանց դիւրահաւանութիւնը և աճապարանքը բանասիրական համեմատութիւնների մէջ, ուշադրութեան պակասութիւնը առասպելի պատմական շարժումի վերաբերմանը՝ ընդհանրապէս և մասնաւորապէս։ Աֆանասյեվի հեղինակութիւններից մէկի՝ Մաքս Միւլլերի դիւցաբանական թէօրիան առաջ բերեց բաւականին մանրամասն քննութիւն մի ռուս բանասիրական հանդիսում**)։ Փոքր ինչ յետոյ ժողովրդական բանաստեղծութեան և դիւցաբանութեան ուսումնասիրութիւնը աղատւեց նախկին դպրոցի թերութիւնից և ընդունեց այլ ուղղութիւն, որ արդէն վարձատրեց նշանաւոր գիտական դիւտերով։

Ընդհանրապէս առաջ՝ (Գոհմմի երկու զիսաւոր ռուս հետեւող) Բուլայեվ և Աֆանասյեվ, գիտական մեթոդ մտցնելով հնութեան և ժամանակակից աւանդութիւնների ու բանաստեղ-

*) Mannhardt, Wald-und Feldkulte, II, SS. XVII—XVIII, XXIII—XXIV.—Պապինъ, Ист. русск. этнографии, II, էջ 122—125.

**) „Филолог. Записки“, 1879, вып. 6.

ՃՈՒԹԵԱՆ հատաղօտութեան մէջ, մեծ ժառայութիւն մատուցին ոռւս աղգանութեան ուսումնասիրութիւններին։ Նրանց երախտիքը բարձր է մանաւանդ նրանով, որ՝ իրանց հետազօտութիւնների յատուկ շրջանում՝ նրանք նախորդներ չեն ունեցել—բացի նիւթեր հաւաքողներից։ Համեմատական լեզւագիտութեան գործադրութեան օրինակները սլաւո-ռուս նիւթերի վերաբերմամբ առաջին անդամ տւեց Բուլայեվը, հաստատապէս դնելով ժողովրդական բանաստեղծութեան և մանաւանդ վէպի գեղարւետական յատկութիւնների և պատմական նշանակութեան որպէս և հին ռուս արւեստի խնդիրը՝ ժողովրդի կրօնա-բանաստեղծական աշխարհակեցողութեան հետ միասին։ Աֆանասյեվը զուխը բերեց ժողովրդական հեքեաթների առաջին հրատարակութիւնը, և իր „Պօэтическія воззрѣнія Славянъ на природу“ երկում տւեց նոխ դիւցաբանական նիւթերի առաջին պիտեմափիկ ժողովածուն և մեռք զարկեց նրանց ամբողջական մշակմանը։

Սակայն գործի նոյն նորութիւնով, որ բարձրացնում է այս դիտնականների ծառայութիւնը, բացատրում են մեծ մասով և նրանց երկերի թերութիւնները՝ մանաւանդ խոշոր՝ Աֆանասյեվի դրամքներում։ Առանց մտնելու մասնագիտական մանրամասնութիւնների մէջ՝ բանի մի ցուցմունքներ մենք կանենք, որոնք բաւական կը լինեն մեր նպատակի համար։

Ամենապիխաւոր քննադատական պակասութիւնը Բուլայեվի հետազօտութիւնների մէջ, որը երբեմն ուղղակի դրական սխալ է դառնում, կայանում է, ինչպէս և Գոխմնի մօտ, տնմիջական համեմատութեան սովորական մեթօդի մէջ և երբեմն դիւցաբանութեան՝ մէկի միւսից շատ հեռու՝ ֆակտերի նոյնացնելում, մոռանալով դրանց նախապէս պատմաբանօրէն։ Հետազոտելու անհրաժեշտութիւնը, աչքաթող անելով միջանկեալ կէտերը և աստիճանները,—այն ինչ այլպիսի վերստուգութիւնը կարող է երբեմն ցույց տալ նոյն իսկ համեմատութեան անհնարին լինելը։ Բերենք օրինակ։

Հին ռուս դպրութեան լիշաակարանների թւում պահպանւել է ժողովրդական դրակարդացնների աչքում մեծ հոչակվալող «երեք սուրբ հայրերի խօսակցութիւնը» *), որ պատ-

կանում է՝ հնումը ալսպէս կոչւած՝ «Ձերժւած», անվաւեր դրքերի կարգին ժագումով օդար, և բովանդակում իր մէջ հարց ու պատասխաններ հաւատքի այլ և այլ առարկաների, արարչութեան դաղտնիքների մասին և այլն՝ համաձայն միամիա ժողովրդական միստիքականութեան և սնապաշտութեան ոգուն: «Խօսակցութիւնը» շատ ընտելացաւ ժողովրդին և փոքրառփոքը իր պատմելու ծեռվ ժողովրդական եղանակ ընդունեց: Բուլայելիր ծեռագրներում դատաւ նոյն նիւթի մի նոր ջարչանոր — «Պատմութիւն Երուսաղէմ քաղաքի»*), որ տեղի ժողովրդական ոճ ունի և նշանաւոր է յատկապէս նրանով, որ ժառայում է ինչպէս մի տեսակ միշտնցը զրոյ **) «Խօսակցութիւնից» դէպի «Գոլուբինայ-ԿНИՐԱ» ***) ժանօթ «վէպը», ինչպէս զրոյ զրոյի փոխազդրութեան առաջին (այսինքն՝ որչափ տակաւին յատնի է) աստիճանը դէպի բանաստեղծական արտավրութիւն, — մի զրւածք, որ երևելի է և շատ տարածւած ժողովրդի մէջ: Արդ՝ «Պատմութիւնը» շատ ուշագրաւ է, ինչպէս վաւերագիր իրողութիւն, որով կարող ենք հետևել, թէ ինչ եղանակով ժողովրդական բանաստեղծութիւնը իւրացնում է օտար թէման և մշակելով այն՝ դարձնում է միանգամայն ժողովրդա-կրօնական «վէպ»: Եւ բանից ինչ է երևում: «Գոլուբինայ-ԿНИՐԱ» վէպում խօսակցող անձիքները, ինչպէս յատնի է, իշխան Վլադիմիրն է և Դաւիթ թագաւորը. մէկը հարցնում է, միւսը պատասխանում: Բայց «Պատմութեան» մէջ, — որ Բուլայելի «վէպի» նախապէսն է համարում, — իշխան Վլադիմիրը փոխարինւած է մի երեակալական անձով, որ «Վօլօս Վօլօտօվիչ» է կոչւում: Այս է Բուլայելի դիւցաբանական դատողութեան ելակէտը:

«Վլադիմիրի տեղը անցնում է դրւտ առասպելական անձ, Վօլօս Վօլօտօվիչ, ուսւ դիւցաբանական վիպասանութեան նոր հերոսը (?)։ Նա այստեղ հանդէս է դալիս, ինչպէս նախատիպ կամ նախորդ պատմական դիւցազն՝ Վլադիմիր Կարմիր-Արևելին. այս մի նշանաւոր իրողութիւն է ուսւ ժողովրդական բանաս-

*) „Беседа трехъ святителей“.— „Повесть града Иерусалима“.

**) Книжный.

***) „Стихъ о Голубиной книгѣ“— „Աղանի-Դիրք“ կամ „Խորիմաստ-Դիրք“:

տեղծութեան պատմութեան մէջ, որ հաստատում է այն հաւանական երեցած ենթադրութիւնը, թէ ինչպէս Վլադիմիրի անունով շատ դիւցազնական երգերում փոխարինւած ու նորոգւած է մի որևէ է հնագոյն դիւցազնական առասպեկտական անձ: Գոնէ «*Гопубиная-книга*» վէպում Վլադիմիրի նախորդն էր Վօլովը: Ինչպէս էլ լինի Վօլովի բանասիրական և պատմական առոքնչութիւնը դէպի Վելեպնէրը Վիլցերը կամ Վօլչկիները և հիւսիսային Վէլչիները՝ հուչակւած Վիլկին-ղըուցում, բայց յամենայն դէպս Վօլով բառը, թէ հին և թէ ժողովրդական ռուս լեզում, նշանակում է հակայ. ուրեմն, արդէն իր բուն նշանակութիւնով, Վօլոտը ժողովրդից հասկացուում է դիւցազնի, կիսաստածի, գերբնական էակի մտքով, ինչպէս առհասարակ իմացւում են հրակաները դիւցաբանութեան մէջ: Վօլոտօվիչ է կոչւած նա այն պատճառով, որ վիխական հերոսները շատ յաճախ կոչւում են իրանց հօր անունով. այսպէս՝ լեհական աւանդութիւնների մէջ թէ հալըրը և թէ որդին կոչւում էին Կռակի: Դա՝ վիխական իդէալի ամենասովորական բաժանումն է երկու անծնաւորութիւնների մէջ: Հերոսին ցանկանում են հալըր հնարել. ամենից յարմարն ու դիւրինն է տալ նրան նոյն անունը, որ կրում է և ինքն հերոսը: Այսպէս ստացաւ իր անունը և Վօլոտ Վօլոտօվիչը»:

Հեղինակը իսկոյնեեթ յիշում է հին Էդդակում մի երգ Վաֆարուդների մասին, որ իր հիմնական մօտիւններով ապշեցուցիչ նմանութիւն ունի մեր «*Պատմութեան*» հետ,—և թէպէտ հեղինակը (նախապէս դիտնալով?) գործ ունի օդար (բիւղանդական) ժագումի անվաւեր գրաւածքի մի վարիանտի հետ, նա չը տասանւեց սակայն եղբակացնելու, թէ այս «զարմանալի նմանութիւնը (եդդալի երգի և մեր «*Պատմութեան*») բացարրւում է ոչ թէ յեաին ժամանակի գրական աղդեցութիւնով, այլ ուշաւ և գէրման դիւցաբանական վէպի նախական աղդակցունիւնով»*)

Մի ուրիշ տեղ Բուսլաևի միանգամայն իրաւացի կերպով նկատում է, թէ «յատուկ անունները ժողովրդական աւանդու-

*) Буслаевъ, Историч. Очерки, I, էջ 417, 455—461.

թիւնների մէջ լաճախս ուլինը և նասաք չունին՝ լինելով յետին առևլադրուննելք *): Այստեղ նաև ինչ որ շատ ի գէպ էր, մըտաքերում էր առասպեղական ասացւածքները Սողոմոնի մասին և, կանգ առնելով «առասպեղի» պատմա-դրականական հետազոտութեան վրա, կարող էր մօտենալ նշմարտութեան,—բայց առաջին տպաւորութիւնը դերակշռեց և հեղինակը ուրախանում է «ոռուս դիւցարանական վէպի նոր հերոսի» դիւտին և որոնում է հերոսի հնագոյն նախնական ազգարանութիւնը:

Յետագայ հետազոտութիւնները ցոյց տւին՝ առանց մի կասկածանքի, որ «Վոլոս Վոլոսովիչի» անունը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յատուկ անունների աղաւաղութեան բաղմաթիւ օրինակներից մէկը՝ ոռու հին գրոց պատմածքների և ժողովրդական վէպերի մէջ, որ այս հերոսի ծագումը առասպեղական չէ, այլ շատ յետին ժամանակի, և թէ դրա տակ ծաժկւած է Պազմէոսի աղաւաղուած գրոց անունը,—ուստի բոլոր դիւցարանական շէնքը տակն ու վրա է լինում:

Վէպի վերաբերմամբ առհասարակ ընդունում էր՝ ինչպէս անկասկածնի, թէ նախնական տառածալին ծագումի վէպը փոխարինում է յետին՝ դիւցազնականով: Այդ հիման վրա իշխան Վաղիմիկը «Կարմիր-Արևի» անձնաւորութեան տակ առասպեղական նախաակապ էին ենթադրում, և այսպէս կոչւած «աւագ» հերոսների վէպերի (բըլիինա) դանւելովը վստահութիւն ներշնչեց, թէ մեր առջև բացւում է յատկապէս այս հնագոյն վէպի մի մասը, վէպի որ նախընթաց էր իշխան Վաղիմիկը շրջանին. դրանք զրոյցներ են՝ «առասպեղական հողագործ Միկուլայի», դիւցազն Սվեատօգուի մասին, «որի վիթխարի տիպարի մէջ ոռու վէպը ամենայն պարզութիւնով պահպանել է լեռնային ցեղի հսկաների մնացորդը» և այլն**): Նորագոյն, աւելի խորին հետազոտութիւնները դանում են Սվեատօգուի համար աւելի մերժաւոր, այն է՝ գրոց ծագում:

Աֆանասյեվի մօտ չափանցութիւնները սովորաբար աւելի հեռու են գնում: Կունի և Շվառցի թէօրիայի համածայն՝

*) Ibid., II, էջ 8.

**) Русск. богатырск. эпосъ, „Рус. Вѣстн.“, 1862, № 3.

նա ամեն տեղ՝ դէպ, թէ անդէպ, բայցատրում կը առասպելները երկնալին երևոյթներով և մանաւանդ ամպրոպալին մըրիկով և շանթով։ Թէ որչափ բաղմաթիւ համեմատութիւններ է արել Աֆանասյելը այս նիւթի վերաբերմամբ, ընթերցողը կարող է տեսնել նրա գրքի երրորդ հատորի ցանկից, ուր դիւցաբանական համեմատութիւնների ամենատար մասը լատիանում է «ամպ», «ամպրոպալին մըրիկ», «շանթ», «օրոտմունք», «հողմ» բառերին։ Ուստի զարմանալի չէ, որ զիւցաղնական ըրիլինայում դիւցաբանական տարրը դարձեալ սահմանափակւում է միայն ամպրոպով և շանթով։ Իլեա - Մուռօմեց՝ ոռոս ժողովրդական վէպի մէջ սահմանառչակւած անունը, պահպանում է ալդ վէպի մէջ սահմանառչակւած անունը, պատկանում են դիւցաբանական մտապատկերների շրջանին՝ ամպրոպի աստւածի մասին։ Քրիստոնէութեան շրջանում՝ «Պեռունի պաշտամունքը, նրա ռազմական որականիշները (ատտրիբուտ) և գլեերի հետ մղած նրա կրիւների զրոյցները փոխադրեցին Եղիա Մարգարէի վրա. Իլեա - Մուռօմեց՝ նման Եղիա Մարգարէին իր անունով և նոյնպէս հոչակւած սուրբ վարքով (գուցէ նաև ռազմական կորովով), ժողովրդական զրոյցների մէջ ծուլեց նրա հետ՝ ինչպէս մի անձ... Իլեա - Մուռօմեցի արկածները հսկայ Սվեատօգոսի հետ ամբողջովին պատկանում են Պեռունի հնագոյն առասպելների շրջանին... Զը նախած այն հրաշապատում ոճին, որ տրւած է Իլեալի մօտ եկած «շրջիկ կալիկների» *) պատմածքին, այստեղ չափազանց ակներև է առասպելական հիմքը։ Իլեա - Մուռօմեցի խմած գարեշուրը—անծրեկ հինաւուրց փոխարերութիւնն է։ Կաշկանդւած ժմեռնալին սառնամանիքից՝ ամպրոպալին զիւցաղնը անշարժ. նստած է (ալսինքն՝ հանդէս չէ գալիս շանթով), մինչև չը իսմէ անմահական շրից, ալսինքն՝ մինչև գարնանալին շերմութիւնը չը խորտակէ սառցալին կապանքները և ծիւնի թուխպերը չը դարձնէ անծրեաբեր ամպեր. այն ժամանակ միայն ոյժ է ծնում նրա մէջ բարձրայնելու շանթարձակ սուրբը։ Պեռունի նախկին թշնամիներին՝ «գլեերին», փոխարինում են վալրենի թափառականները։ «Աւաղակ-Սոխակի» (Ը-

*) Կալիկ թերություն.

լուսակացութիւնը մարմնացրել է մրգկալից, ամպրուպալին թուլսպի գլւխն։ Սոխակ անունը արւած է հաճածան հնագոյն նրանութեան փոթորկի սուլոցի՝ այդ թուչնի որոտածայն երդի հետ... «Աւազակ» մակղիրը բացարւում է փոթորկի կործանիչ յատկութիւններով» և այլն *):—Այս բոլորը շատ ամփոփ և ճարտարութեամբ է շինւած, բայց խախուս նիւթից է։

Սկսենք հէնց նրանից, որ Պեռունի որտկանիշները և նրա պասերաղմբ «գլերի» հետ գուրս են բերւած ոչ թէ որևէ նիշտ կուտանների հիման վրա,—որոնք գոյութիւն չունին, —ալ գուշակութիւններից, նմանութիւններից և առատ ենթագրութիւններից։ «Աւազակ-Սոխակի» նկարազբութեան մէջ առաջ են բերւում զրոյ պատմաժըներ և այնպիսի իրը թէ ժողովրդական երգեր, օրոնց կեղծ լինելը առաջ արդէն ապացուցւած էր և այլն։ Բայց աւելի տարօրինակ է նրա ընդհանուր հայեցակէար զիւցազնական բըիլին այսի առընչութեան մասին դէպի սրա կարծւած զիւցաձին կամ աստածածադադ (թէօդօնիկ) նախատիպը. Աֆանասյել հնարաւոր է գտնում զիւցազնի ամեն մի քայլը, ամեն մի մանրամասնութիւնը յարմարցնել նախնական առասպելին, կարծես թէ վէպի փոփոխելը մէկ ձևից դէպի միւսը, այսինքն մի պատմական շրջանից դէպի նոր շրջան, կաղանում էր լոկ անունների փոխանակութեան մէջ՝ ուրիր թէ մանր մասնաւորութիւններն էլ պէտք է պահպանած լինէին։ Խոկապէս՝ մենք ոչինչ չը գիտենք այդ փոփոխութեան կերպի կամ եղանակի մասին. բայց եթէ հարկ լինի յենւել նրանութիւնների (անալօգիա) վրա, մենք կը աւեսնենք, որ բանաստեղծական, անդամ և զրոյ, նիւթերի ժողովրդական փոփոխակումը (վարիացիա) այլափոխում է երբեմն այդ նիւթերը այն աստիճան, որ համարեա անճանաչելի են դառնում զրանք։ Աւելի մեծ փոփոխութիւններ պէտք է ենթազրել այստեղ, ուր զիւցազնական վէպի «վարիանտը»՝ համեմատարար զիւցաձնի հետ՝ կախանում էր ոչ աւելի ոչ պակաս քան ժողովրդական աշխարհայեցողութեան ամենող յեղափոխութեան մէջ։—Եթէ Պե-

*). Պօէտիկ. Յօզէրեն., I, 302—309.

ոռւնին փոխարինում էր Եղիա Մարգարէն, իսկ արդ բիբլիական հերոսին՝ Իլլեա - Մուռօմեցը, — ահա, ուրեմն ալլավոխութեան երկու խոշոր աստիճաններ, և մենք աւելի շուտով կարող էինք սպասել, որ վերջնում առաւել նկատելի կերպով կանդրադառնալ մերծաղոյն վերջբնթեր աստիճանը, քան բուն դիւցածին բնատիպը, ալսինքն՝ թէ Իլլեա - Մուռօմեցի անծի մէջ աւելի նկատելի կը լինէր Եղիա Մարգարէն, քան Պեռունը, — այն ինչ Աֆանասյէվը բրիինան համեմատում է ուղղակի ամպերի և շանթերի հետ։ Դարձեալ, դիւցաղներդական ստեղծագործութիւնը անկասկած դեռ ևս շատ գործունեալ էր մեր միջին դարերում և տարածում էր այն ժամանակ ոչ միայն իր ժողովրդական թէմաների վրա, այլ ընդգրկում էր և յեղաստեղծում (ինչպէս յետոյ կը տեսնենք) անգամ և համեմատաբար յետին ժամանակի օտարերկրեայ թէմաները, — օրինակ, անվաւեր դրւամքների նիւթերի և զրոց պատմամքների մշակելում, — ապա առաւել ևս նրա մէջ ենթադրելու է գործող զօրութիւն այն հին դարերում, որոնք անհամեմատ մօտ էին թարմութիւնով լի վէպի շրջանին։ Այն ինչ Աֆանասյէվի թէօրիալում դիւցաղնական վէպը սահմանափակուում է լոկ ալլաբանական ընդօրինակութիւնով և անւանափոխութիւնով։ Արդարեւ, դիւցաղնական վէպը պահպանում է շատ առասպելական նաևառուն-նէ-ննէր։ բայց սրա հետ միասին մեզ ցոյց են տալիս նրա մէջ հին իշխանական Ռուսիալի մի ամբողջ կենցաղական պատկեր, և բայց Իլլեա - Մուռօմեցից (կարծւած Պեռուն) մի ամբողջ շարք իրական դասակարգալին անծնաւորութիւններ և այլն։ — ապա ուրեմն դիւցաղներդական սաեղծաղործութիւնը գործում էր լիակատար ուժով և չը մոռացաւ դրա հետ նոր պատմական պարագան։ — Կօտիեարեվսկին շատ ճիշտ էր ասում, թէ Իլլեա - Մուռօմեցի Ներեքը (որոնք՝ ըստ Աֆանասյէվի՝ մնացորդ են շանթի առասպելական դաղափարի) կարելի է նկատել իր-ըւ լոկ սովորական գէնք՝ նախ քան հրածիդ դէնքերի գործածութեան շրջանը, իսկ «Աւազակ - Սոխակի» ոսկի գանձը (ըստ Աֆանասյէվի՝ ամպերի տակ ծածկւած երկնալին լուսատու մարմինների փոխարերութիւն) — է իրբեւ երևակալութեան աւելում աւազակի գաղափարին, որ կարող էր նաև փողոպակել։ Քըն-

նաղատութիւնը, որ չէ լափշաակւում կանխակալ թէօրիալով, պարտական է ընդունել այս կարծւած նշանակները հասարակ էական իրերի անդ, իսկ երբ բացահայում են նշանակները՝ տակն ու վրա է լինում և Աֆանատյեվի մեկնութիւնը: Ակներեւ է, որ բրլինալի կաղմութեան պո-օցեար ալլ էր, նաև եթէ շարունակելու լինէինք խոստովաններ, թէ ալսուեղ դիւցածին վէալը փոխարինւել է դիւցաղնականով:

Նորագոյն հետազօտութիւնները գտան ժողովրդա-դիւցարանական աւանդութիւնների զարգացման նաև ալլ ճանապարհներ, և՝ ի միշի ազլոց, բըիլինալի համար (առայժմ միայն նրա մի քանի մասերի) առաջ չենթադրւած դրոց աղբիւրներ,—այնպէս որ արդէն ներկայումս վիստական սաեղծագործութեան պո-ցեսը բոլորովին տարբեր է հանդիսանում Գոփմնի և նրա մերձաւորագոյն դպրոցի տեսակէսից: Բայց մինչդեռ այդ նոր դիւտերը կատարեցին՝ այն թէօրիան, թէ դիւցածին վէալը փոխւում է դիւցաղնականի սիմւոլիկ լնդորինակութեան միջոցով, որպէս և առաօպելների մեծագոյն մասի մեկնութիւնը, և այդ թւում բըիլինների ամենազլիստոր հերոսի՝ իրրեւ ամպրոպի և շանթի փոխաբերական նկարագիրներ և մարմնացումներ,—մեծ ժողովրդականութիւն ստացան ոռւս դրականութեան մէջ. դասաղբերը և այլ բարձր կուրսերը լնդունեցին դրանց իրրեւ անխախտ ճշմարատութիւն, և մինչև աղժմ էլ կրկնում են,—ըստ սովորութեան դասադրբերի՝ յետ մնալ դիտութիւնից... *).

Թարգմ. Խ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆՑ.

*) Пыпинъ, Ист. русск. этнографіи, II, էջ 126—132.